Տ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱԾԱՆՑՈՒՄ ԵՎ ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Բառերի միջև գոյություն ունեցող կապի հարցը վերջին ժամանակներս առանձին ուշադրության է արժանանում շարահյուսությանը նվիրված ուսումնասիրություններում, քանի որ շարահյուսական կապն այն ելակետն է, որ դրվում է խոսքի կառուցման (համադրման) հիմքում։ Խնդիրների այդ մեծ շրջանակի մեջ կենտրոնական տեղ է գրավում խնդրառության հարցը։

Ընդհանուր առմամբ խնդրառությունը տարբեր կերպ է մեկնաբանվում, որոնք ի վերջո կարելի է հանգեցնել հետևյալ երկու ձևակերպումներին. 1. խնդրառությունը ձևական հատկանիշ է և 2. խնդրառությունը բառի ձևական-իմաստային հատկանիշ է։ Եթե ավելի պարզեցնենք դրված հարցերի էությունը, ապա դրանք կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝ խնդրառությունը քերականական իրողություն է, թե՝ բառարանային, այսինքն որևէ բառ խնդրառելու ունակություն ունի իր բառարանային վիճակում, թե այն ձեռք է բերում խոսքի մեջ գործածվելիս, այս կամ այն քերականական կարգը ստանալուց հետո միայն։

Անդրադառնանք խնդրառության մասին արտահայտված կարծիքներին։ Լ. Ելմսլևը իր «Խնդրառության հասկացությունը» աշխատության մեջ խնդրառությունը դիտում է իբրև ձևական կապ, որի դեպքում մի բառի որևէ ձևով հանդես գալը պայմանավորված է բառակապակցության մյուս անդամի որևէ ձևով հանդես գալով։ Նա գրում է. «...Ասում են, որ նախդիրը կառավարում է (տերմինը Գ. Բ. Ջահուկյանինն է—Տ. Ա.) անունը և նրա հոլովը, որ առաջին բառը կառավարում է երկրորդը և վերջինիս հոլովը և թիվը համապատասխանում են առաջին բառի հոլովին և թվին..., բայց ոչ թե բառն է ամբողջությամբ կառավարվում նախդրի կողմից, այլ միայն նրա այս կամ այն հոլովը։ Իսկ երբ մենք ասում ենք, որ երկրորդական նախադասության ստորոգյալը կառավարվում է շաղկապի կողմից, ապա շփոթում ենք բայի ժամանակն ու եղանակը բուն բայի

(բայիմաստի) հետ, քանի որ կառավարվում է բայի ժամանակն ու եղանակը»[1]։ Ի տարբերություն ասվածի, օրինակ, Ա. Ն. Գվոզդևը գտնում է, որ կախյալ բառի ձևը թելադրվում է ոչ թե գլխավոր բառի ձևով, այլ վերջինիս բառիմաստով[2], իսկ Լ. Վ. Շչերբան ուղղակի նշում է, որ խնդրառությունը ամեն մի առանձին բառի սեփականությունն է և հենց այդ պատճառով էլ բառարանային իրողություն է[3]։ Այսպես, ներել բայը անկախ այն բանից, թե որ թվով, որ ժամանակով և որ եղանակով է օգտագործվում, միշտ պահանջում է որևէ ուղիղ խնդիր կամ խոսել բայը անկախ իր գործածության կոնկրետ դրսևորումից միշտ մասին կապով որևէ բառ է պահանջում և դեռ ավելին, այդ կապով որևէ բառ է պահանջվում նույնիսկ խոսել բայից սերված խոսք բայանունը։

Հայ քերականագիտության մեջ խնդրառության հարցերը միշտ ուշադրության կենտրոնում են եղել։ Այտընյանը դրանց անդրադառնում է իր աշխատության[4] երկրորդ մասում, որ կրում է «Խօսք կամ բառերու համաձայնութիւն» խորագիրը։ Հեղինակը գրում է. «Մասանց—բանի օրինաւոր գործածութիւնը կամ իրարու քով գալը կապուիլը՝ Շարադրության կամ Մասանց—բանի համաձայնութիւն կ'անուանուի[5]։ Եվ այնուհետև նշում է, որ շարադրությունը կամ համաձայնությունը «երեք գլխավոր մաս ունի»՝ բուն համաձայնություն, խնդրառություն և կիրառություն։ Համաձայնության նրա ըմբռնումը գրեթե առանց փոփոխության կիրառելի է նաև մեր օրերում։ Կիրառության այտընյանական ըմբռնումը շատ ավելի ծավալուն է. «Կիրառութիւն, այսինքն թե այլեւայլ մասունք—բանի ինչ կերպով գործածելու է. զորօրինակ իրենց շարքը, հոլովները, ժամտնակները եւ այլն»[6]։ Այս բաժնում խնդրառությունը ամենաընդհանուր ձևով բնութագրելուց հետո («Խնդրառութիւն, այսինքն թէ որ բառ ինչ հոլով կ'ուզէ։ Եւ այս հոլովը խնդիր կը կոչուի»), հեղինակը հետագայում մի ամբողջ գլուխ է նվիրում այս հարցի քննությանը, ուր, մասնավորապես, խնդիրը սահմանված է հետևյալ կերպ. «Խնդիր կ'ըսուի այն հոլովն, որ գլխա-

---

1 Տե՛ս Л. З. Сова, Аналитическая лингвистика, М., 1970, с. 31.

2 А. Н. Гвоздев, Современный русский литературный язык, М., 1958, с. 29.

3 Л. В. Щерба, М. И. Матусевич, М. Ф. Дусс, Русско-французский словарь, М., 1936.

4 Ս. Այտընյան, Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1883։

5 Նույն տեղում, էջ 89։

6 Նույն տեղում։

վոր խօսքին կիսակատար միտքը կամբողջացընէ»[7]։ Հեղինակը նշում է, որ խնդիր կարող են ստանալ բայերն ու դերբայները, գոյականները, ածականները, թվականները և նախադրությունները։

Այտընյանը տարբերում է բայի խնդրառության երկու տեսակ՝ խնդիր-սեռի և խնդիր-բնութեան։ «Խնդիր-սեռի այն բնական խնդիրն է՝ որն որ ներգոյական կամ կրաւորական բայ մը ուղղակի և ի հարկէ կ՝ուզէ» և «Խնդիր-բնութեան այն պատահական խնդիրն է՝ որ անուղղակի հայեցում մ՝ունի իւր բային, եւ խօսքին իմաստին համեմատ որեւիցէ հոլով կրնայ դրուիլ»[8]։ Ինչպես տեսնում ենք, Այտընյանը խնդրի և խնդրառության բավականին լայն ըմբռնում ունի, քանի որ խնդրային հարաբերություն է տեսնում գոյական-գոյական, (բացահայտիչ—բացահայտյալ, հատկացուցիչ—հատկացյալ), ինչպես նաև ածական-ուղղականով, տրականով, բացառականով և գործիականով դրված գոյական կապակցությունների մեջ։ Ասվածին պետք է ավելացնել, որ հեղինակը խնդրային հարաբերություն է սահմանում նաև դերբայ-գոյական, թվական-գոյական և նախադրություն-գոյական կապի մեջ։ Մյուս կողմից պարզ է նաև, որ հեղինակը վերը նշված բոլոր հարաբերություններում գոյականն է համարում ստորադաս, իսկ նշված մյուսները՝ գերադաս կամ խնդրառու։

Խնդրառության, իբրև բառերի միջև եղած շարահյուսական կապի, մասին խոսել է Մ. Աբեղյանը իր «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ։ Այդ գրքի «Խոսքի մասերի հարաբերությունը» բաժնում[9] հեղինակը տարբերում է բառերի երկու կարգի հարաբերություն՝ ստորադասական և համադասական։ Այնուհետև Աբեղյանը գտնում է, որ «Բայը միշտ ամենից գերադասն է խոսքի մեջ, որովհետև նրանով է արտահայտվում ստորոգումը։ Բայի նկատմամբ ստորադաս են իր լրացումները՝ ենթակա, ստորոգյալ ու ստորոգելիական վերադիր, խնդիր և պարագա»[10]։ Ինչպես տեսնում ենք, Աբեղյանը գագաթում տեղավորում է բայը՝ դրա տակ հասկանալով մի այնպիսի ամբողջություն, որ իր մեջ ներառում է և՛ ստորոգումը, և՛ ստորոգվող հատկանիշը։ Դրանով է բացատրվում բային (այսինքն նրա ստորոգող ունակությանը) ստորոգյալի հատկանիշի, ստորոգելիական վերադրի, խնդրի և պարագայի ստորադասումը։

Խնդրառության հարցերի մասին Աբեղյանը խոսում է «Կապակ-

---

7 Նույն տեղում, էջ 96։

8 Նույն տեղում, էջ 97։

9 Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 385։

10 Նույն տեղում, էջ 395։

ցության տեսակներ» բաժնում։ Խնդրառությունը քննվում է խնդրառու (գլխավոր) բառի տեսանկյունից։ Նա գրում է. «Կախման հարաբերության մեջ լրացում գոյականն ենթարկվում է լրացյալին, որ իր նշանակությամբ իշխում է նրան՝ խնդրելով, պահանջելով, որ իր լրացումը դրվի այս կամ այն ձևով։ Լրացում կապակցության եղանակն և հարաբերությունն իր լրացյալի հետ՝ կախված է լրացյալից։ Կախման հարաբերությունը քերականության մեջ կոչվում է խնդրառություն կամ վարում...»[11]։

Ինչպես տեսնում ենք, երևույթի թե՛ բացատրությունը, և թե՛ անվանումները տալիս, հեղինակը ելնում է բառակապակցության գերադաս անդամի դիրքերից։

Խնդրառությանը անդրադարձել է Գ. Սևակը «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» աշխատության մեջ։ Հեղինակը գրում է. «Խնդրառությունը բայերի այն առանձնահատկությունն է, որի համաձայն նրանք իրենց իմաստի կամ սեռի թելադրությամբ պահանջում են զանազան խնդիրներ և պարագաներ»։ Ըստ հեղինակի, բայի սեռի թելադրությամբ պահանջվող խնդիրներն են ուղիղ խնդիրը և անջատման խնդիրը, իսկ իմաստի թելադրությամբ պահանջվող խնդիրներն են միջոցի և մատուցման խնդիրները։ Բայական խնդրառության իրողություն է համարում նաև պարագա առնելու ընդունակությունը։

Քննության առարկա հարցին անդրադառնում է Վ. Առաքելյանը իր աշխատություններից մեկում[12]։ Նախաբանում, խոսելով աշխատության նպատակների և հետազոտության մեթոդի մասին, հեղինակը, հենվելով հատկապես ռուս քերականագիտության նվաճումների վրա, առանձնացնում է բառերի միջև եղած կապի երեք տեսակ՝ համաձայնություն, խնդրառություն, ներունակություն։ Մասնավորապես, անդրադառնալով խնդրառությանը, Վ. Առաքելյանը գրում է. «Խնդրառությունը շարահյուսական այն կապակցությունն է, որտեղ որևէ գերանվան, գոյականի կամ գոյականացած մի այլ խոսքի մասի հոլովը կախված է մի այլ բառի, առանձնապես բայի իմաստային և քերականական նշանակությունից։ Մի դեպքում (համաձայնության) երկու տարբեր բառերի ձևական նշանակություն գոյություն ունի, իսկ մյուս դեպքում (խնդրառություն) իշխվող բառի ձևը որոշվում է իշխող բառի պահանջով, նրա քերականական և բառական նշանակությամբ»[13]։

---

11 Նույն տեղում, էջ 397։

12 Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957։

13 Նույն տեղում, էջ 6։

Այդ շրջանում հայ քերականագիտության մեջ խնդրառության տեսական հարցերը քիչ են քննվում։ Ի հակադրություն դրան, խիստ մանրամասն քննության են ենթարկվում առանձին հոլովների, կապերի ու դրանց խնդիրների կապակցման հարցերը, օրինակ, Վ. Առաքելյանի արդեն նշված աշխատության մեջ։

Ա. Աբրահամյանի ժամանակակից հայերենի բային նվիրված աշխատության մեջ խնդրառության հետ կապված որոշ հարցեր քննվում են բայի սեռին նվիրված գլխում։ Նշվում է, օրինակ, որ խնդրառությունն ընդհանրապես չի կարելի դիտել իբրև սեռային արտահայտություն, քանի որ միայն սեռից բխող խնդրառությունն է անմիջականորեն կապվում սեռային արտահայտության հետ[14]։

Խնդրառության՝ իբրև բային հատուկ երևույթի մասին է խոսվում նաև Մ. Ասատրյանի «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» աշխատության Բ հատորում։ Նա գրում է. «Խնդրառությունը դրսևորվում է գոյականների և առարկայական իմաստ արտահայտող այլ բառերի հոլովական ձևերի՝ բայերից ունեցած կախմամբ»[15]։ Ուշագրավ են հեղինակի դիտողությունները բայից «ածանցված» (մենք կասեինք սերված) գոյականների և ածականների դեպքում խնդրառության պահպանման մասին։

Բառակապակցության սահմաններում բառերի միջև եղած հարաբերության հարցը մանրամասն քննության է ենթարկվել Վ. Քոսյանի աշխատության մեջ[16]։

Փաստական հարուստ նյութի քննության հիման վրա հեղինակը դասդասել է բառակապակցությունները, առանձնացնելով դրանց 6 խումբ՝ գոյականի, ածականի, թվականի, դերանվան, բայի և մակբայի բառակապակցություններ, որոնցից, բնականաբար, ավելի մանրազնին ուսումնասիրված են գոյականական և բայական բառակապակցությունները։ Ժամանակակից հայերենի անվանական բառակապակցություններից մեր քերականագիտության մեջ քիչ թե շատ ուշադրության են արժանացել ուղղականով և սեռականով կառույցները։ Գոյականի բառակապակցություններին նվիրված բաժնում հեղինակը, ամբողջացնելով և հարստացնելով արդեն արվածը, տվել է գոյականի բոլոր կապակցությունների սպառիչ նկարագրությունը։ Այսպես, վերը նշված բառակապակցություններից բացի, հեղինակը քննում է նաև

---

14 Ա. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, հ. 1, Երևան, 1962, էջ 496։

15 Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Բ, Երևան, 1973, էջ 186։

16 Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975։

գոյականի կապակցությունը թեք հոլովների, ածականի, թվականի, դերբայների, մակբայի, կապի և կապի խնդրի հետ։

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում բայական բառակապակցություններին նվիրված բաժինը, ուր հեղինակը մի կողմից ճշտում է, մյուս կողմից առաջին անգամ ներկայացնում բայական բառակապակցությունների կախյալ անդամների մի շարք իմաստներ ու նրբերանգներ։ Ելնելով բայական բառակապակցությունների առանձնահատկությունից, հեղինակը դրանք քննում է, հատուկ ուշադրություն դարձնելով, ինչպես գլխավոր բառի, այնպես էլ կախյալ բառի իմաստի վրա և դալիս այն եզրակացության, որ բայի կապակցելիությունը պայմանավորված է մի կողմից ինչպես գլխավոր, այնպես էլ կախյալ բառի բառային իմաստից, մյուս կողմից՝ բայի սեռային իմաստից։ Աշխատանքը կարևոր նշանակություն ունի ժամանակակից հայերենի խնդրառության ընդհանուր պատկերը վերհանելու համար։

Գ. Ջահուկյանի «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները»[17] աշխատանքում, ի թիվս բազմաթիվ այլ հարցերի, վեր են հանվում նաև ժամանակակից հայերենի խնդրառության իրողությունները, որոնք հատուկ քննության առարկա են դարձել «Նախադասության լրացական անդամներ» գլխում։ Խոսելով խնդիրների և պարագաների մասին, հեղինակը նշում է, որ այդ լրացումները բնորոշում են ոչ թե ստորոգյալը, այլ բայը, ինչպես էլ որ այն հանդես գա՝ ստորոգական, թե ոչ ստորոգական գործառությամբ։ Նշվում է նաև, որ խնդրառությունն ընդհանրապես ավելի կամ պակաս չափով հատուկ է ոչ միայն բային, այլև ուրիշ խոսքի մասերի[18]։

Ավելի ուշ, անդրադառնալով հայ քերականագիտության մեջ գործածվող տերմիններին, հեղինակը նշում է, որ «առդրության» փոխարեն «շարադասություն» տերմինի գործածումը, իսկ «կառավարության» փոխարեն «խնդրառություն» և «հոլովառություն» տերմինների գործածումը հաջող չէ, քանի որ մասնավորապես՝ «ա) կառավարությունը կարող է լինել ոչ միայն «խնդրառություն», այլև «պարագառություն», բ) կառավարությունը կարող է արտահայտվել ոչ միայն իբրև «հոլովառություն», այլև որպես կապառություն»[19]։ Արժեքավոր է կառավարության տարբեր դրսևորումների դասակարգումը, ուր հաջողվել է լեզվական խիստ հետաքրքիր այդ երևույթի գրեթե սպառիչ նկարա-

---

17 Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974։

18 Նույն տեղում, էջ 419։

19 Նույն տեղում, էջ 424։

դրությունը տալ։ Ըստ այդ դասակարգման կառավարությունը կարող է լինել՝

1. Գործառական-շարահյուսական, երբ լրացման հոլովական ձևավորումը անմիջականորեն բխում է նախադասության մեջ ունեցած նրա գործառությունից (պաշտոնից) և ձևական-ավանդական, որի դեպքում լրացման հոլովական ձևավորումը պայմանավորված է տվյալ լրացյալի հետ տվյալ լրացման՝ պատմականորեն ավանդված գործածությամբ։

2. Ուժեղ, երբ լրացյալը պահանջում է որոշակի հոլովով կամ կապով ձևավորված խնդիր։ Թույլ է կոչվում այն կառավարությունը, որի դեպքում լրացյալների հոլովական ձևավորումը ավելի շատ կախված է նրանց գործառությունից, շարահյուսական դերից ու պաշտոնից, այսինքն՝ լրացյալի և լրացման զուգորդումը ազատ բնույթ է կրում, և լրացյալը կարող է զուգակցվել տարբեր հոլովներով ու կապերով խնդիրների հետ։

3. Պարտադիր, որի դեպքում լրացման առկայությունը պարտադիր է, այսինքն՝ լրացյալը չի կարող գործածվել առանց լրացման։ Ոչ-պարտադիր, երբ խնդրի առկայությունը պարտադիր չէ։ Պարտադիր կառավարությունը, սովորաբար, ուժեղ է, ոչ պարտադիրը՝ թույլ

4. Միակի է կոչվում այն ուժեղ կառավարությունը, որի դեպքում լրացյալը պահանջում է մեկ լրացում։ Բազմակի է կոչվում այն ուժեղ կառավարությունը, որի դեպքում լրացյալը պահանջում է մեկից ավելի՝ տարբեր հոլովներով ու կապերով ձևավորված համարժեք լրացումներ[20]։

Հեղինակը բայերի կապակցելիական դասակարգումը կատարում է ստորոգյալի քննությանը նվիրված հատվածում։ Ըստ բայերի կապակցելիության, առանձնացվում է դրանց երեք կարգի դասակարգում՝ դասանշային, արժութային և ընտրութային։ Առաջին խմբի մեջ բայերը մտնում են ըստ ենթակայի դասային տարբեր խմբերի հետ կապակցվելու կամ չկապակցվելու։ Երկրորդ՝ արժութային խմբի մեջ բայերը մտնում են ըստ առարկայանիշ բառերի ու բառակապակցությունների (ենթակա, գոյականական ստորոգելի, խնդիր, գոյականական պարագա) հետ դրանց ունեցած կապակցելիության։ Երկրորդ՝ ընտրութային խմբի մեջ բայերը մտնում են ըստ մակբայների հետ դրանց ունեցած կապակցելիության։ Պարզ է, որ բայերը բնութագրելու համար խիստ կարևոր է երկրորդ՝ արժութային դասակարգումը։

---

20 Նույն տեղում, էջ 424—425։

քանի որ այդ խմբի չափանիշներն են, որ հիմնականում բնութագրում են բայը և որոշում նրա արժույթը (վալենտականությունը)։

Խնդրառության հարցը քննության առարկա է դառնում նաև «Հայոց լեզու» բուհական դասագրքում[21]։

Բառերը նախադասության մեջ գերազանցապես կապակցվում են ստորադասական կապով՝ այսինքն մի բառ իշխում է մյուսին։ Այն բառը, որն իր քերականական որոշակի կարգի շնորհիվ իշխում է մեկ այլ բառի, կապակցության կամ բառերի վրա, կոչվում է խնդրառու բառ։ Այն բառը, որ խնդրառու բառի քերականական կարգի պահանջով այս կամ այն հոլովով կապակցվում է նրան և իր կիրառությամբ քերականական կախվածության մեջ է գտնվում կամ ենթարկվում է, կոչվում է խնդիր։

Խնդրի դերով հանդես են գալիս համարյա բոլոր խոսքի մասերը, եթե դրանք հոլովվում են կամ առարկայանալով հոլովվելու հատկանիշ են ձեռք բերում, որովհետև խնդիրը կիրառվում է թեք հոլովներով։

Խնդիրներ առնում են ոչ միայն բայերը, այլև հատկապես գործողություն արտահայտող գոյականները, մասամբ այնպիսի գոյականներ, որոնք օժտված են այս կամ այն գործողությունը կատարելու որոշակի հատկանիշով, ածականներ, որոշ մակբայներ, թվականներ, դերանուններ[22]։

Խոսքի մեջ բառերի հարաբերության հարցերը, բնականաբար, մեծ ուշադրության են արժանացել «Ժամանակակից հայոց լեզու» աշխատության երրորդ հատորում[23]։

Բառակապակցությանը նվիրված գլխում խնդրառության հարցերը արծարծված են իբրև տեսական ելակետեր. խնդրառության բուն հարցերը քննվում են գրքի «Կապակցություն» գլխում։ Այստեղ ևս կապակցությունը ներկայացվում է հայերենագիտության համար ավանդական դարձած համաձայնություն, խնդրառություն և առդրություն եղանակներով։ Իբրև համաձայնություն ներկայացվում են կապակցության մեջ գտնվող տարբեր բառերի դիմային և գլխավորապես թվային համաձայնության օրինակներ։ Առդրության մասին խոսելիս արտահայտվում է այն միտքը, թե «Լրացումը կախվածության մեջ չէ գե-

---

21 Ս. Գ. Աբրահամյան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան, Հայոց լեզու, 2-րդ մաս, Շարահյուսություն, Երևան, 1975։

22 Նույն տեղում, էջ 205—206։

23 Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Ե. Գ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, «Շարահյուսություն», Երևան, 1976։

բադաս անդամից և կիրառվում է անփոփոխ ձևով՝ անտարբեր գերադաս անդամի իմաստի կամ քերականական հատկանիշների նկատմամբ»[24]։ Բերվում են արագ վազել և ճաճախ ճանդիպել օրինակները։ Անհասկանալի է, թե ինչպե՞ս կարող են երկու բառեր մի կողմից կապակցության անդամ լինել, գերադաս և ստորադաս հարաբերության մեջ լինել և մյուս կողմից անտարբեր մնալ միմյանց նկատմամբ։ Մի՞թե դրանց միջև հարաբերության միակ հնարավորությունը շարադասությունն է տալիս, ինչպես նշվում է հաջորդ տողերում։ Նշենք նաև, որ արագ. և ճաճախ բառերի թվացյալ քերականական անտարբերությունը արդյունք է ոչ թե բառակապակցության առանձնահատկության, այլ այդ բառերի բնույթի՝ դրանք վերուստ չթեքվող բառեր են։ Իմաստային անտարբերության մասին ևս խոսք լինել չի կարող, քանի որ նախ՝ վազել և ճանդիպել բայերը հենց միայն բայ լինելու շնորհիվ կարող են ունենալ մակբայով արտահայտվող կախյալ անդամներ, և ապա ոչ բոլոր մակբայներն են, որ կարող են նշված բայերից կախվածության մեջ լինել։ Այս դեպքում անպայմանորեն առկա է իմաստային ընտրության անհրաժեշտություն։

Խնդրառությունը բնորոշվում է հետևյալ կերպ. «Խնդրառությունը բառերի ստորադասական կապակցության այնպիսի եղանակ է, որի ժամանակ ստորադաս անդամը ընդունում է գերադաս անդամի պահանջած քերականական համապատասխան ձևը»[25]։ Այնուհետև մանրամասնորեն ներկայացվում են խնդրառության տարբեր դրսևորումներ, ըստ որում դասակարգելիս բայի համար նշվում է միակի և կրկնակի խնդրառության հնարավորություն։

Խնդրառության մասին կարծիքներին ծանոթանալիս նկատում ենք, որ հետազոտողների մի մասը խոսում է՝ ուշադրությունը կենտրոնացնելով խնդրառու (գլխավոր) բառի վրա, մյուս մասը՝ երևույթը դիտելով կախյալ բառի տեսանկյունից։ Երբ խնդրառությունը դիտվում է իբրև բառերի միջև ձևաիմաստային կապ, կազմվում է այսպես կոչված «խնդրառությունների բառարան»։ Սրանք հատուկ տիպի բառարաններ են, ուր բառը, տվյալ դեպքում, ասենք, բայը բնորոշվում է իր խնդրառությամբ կամ արժութայնությամբ՝ բերվում է բայը, ապա նրա խնդրառությունը։ Վերջինս ներկայացնելու ամենահարմար ձևը հարցերն են։ Այսպես, օրինակ, վերցնենք հետևյալ բայերը՝ բաժանել (ով, ում, ինչ), մոտենալ (ով, ում, ինչին), զեկուցել (ով, ում, ինչի (ում) մասին), լցնել (ով, ինչը ինչով), պատվաստել (ով, ինչ), ներկա-

---

24 Նույն տեղում, էջ 406։

25 Նույն տեղում, էջ 370։

յանալ (ով, ում, ինչի), նեղանալ (ով, ումից, ինչից), բացատրել (ով, ում, ինչ) և այլն։ Պարզ է, որ այս դեպքում ավելի կարևոր է խնդրառու բառը։ Իսկ երբ խնդրառությունը դիտվում է իբրև ձևական կապ (ինչպես Լ.Ելմսլևի մոտ է), ապա հավասարապես հետաքրքիր են և՛ գլխավոր բառը, և՛ կախյալ բառը։

Վերևում բայերի կապակցելիության մասին խոսելիս նշվեց, որ բայի շարահյուսական բնութագրի համար խիստ կարևոր է նրա արժութային դասակարգումը։

Բառերի միջև շարահյուսական կապի տեսության մեջ այժմ կենտրոնական տեղերից մեկը զբաղեցնում է արժույթ (վալենտականություն) հասկացությունը։ Պրոֆ. Գ. Ջահուկյանը իր նշված աշխատության մեջ գրում է. «Արժույթը ոչ այլ ինչ է, եթե ոչ կառավարության (խնդրառության) գաղափարի հետագա ընդարձակումը... Ավելի լայն առումով արժույթը բայի կապակցելիությունն է ենթակայի, խնդիրների և սարադանների հետ։ Կարելի է ասել, որ արժույթը որոշում է բայի էությունը՝ որպես զանազան կարգի առարկայական հարաբերությունների լեզվական արտահայտություն»[26]։

Խնդրառության և արժույթի գաղափարը իր բնորոշ կողմերով քննված է հայտնի շարահյուսագետ Տենյերի «Կառուցվածքային շարահյուսության ուրվագծեր» աշխատության մեջ, ուր հեղինակը առանձնացնում է երեք հիմնական հասկացություն՝ միջուկ, ճանգույց և ասույթ[27]։

Միջուկը շարահյուսության հիմնական միավորի՝ բառի ավելի ճշգրտված հասկացությունն է։ Դա հենց նույն բառն է, բայց արդեն քերականորեն ձևավորված և հենց այդ պատճառով էլ պատրաստ ասույթում գործառելու։ Ի տարբերություն միջուկի, բառը գծային միավոր է, ասույթի մի հատվածը և հարևան բառերից որոշակիորեն սահմանազատված չէ։

Հանգույցը մի ամբողջություն է, որ կազմված է միջուկից՝ իբրև գլխավոր (խնդրառու) բառ և նրան ստորադասված բառերից։ Հանգույցները ըստ կենտրոնական բառի (միջուկի) բնույթի բաժանվում են հետևյալ տեսակների՝ բայական, գոյականական, ածականական և մակբայական։ Բայական հանգույցը կազմված է բայից և նրան ստորադասված ակտանտներից՝ բայական գործողության մասնակիցներից։ Տարբերվում է ակտանտների երեք տեսակ՝ ենթակա, ուղիղ խնդիր և

---

26 Գ. Բ. Ջահուկյան, նշված աշխ., էջ 466։

27 Տե՛ս Э. Р. Атаян, Проблемы и методы структурального синтаксиса. Ереван, 1962.

անուղղակի խնդիր։ Ըստ Տենյերի, ենթական կառուցվածքորեն ստորադասվում է բայական կենտրոնին այնպես, ինչպես և խնդիրը։ Նա խոսում է նաև խոսքամասային անցումների մասին և դտնում, որ ամեն անգամ անհրաժեշտ է հանգամանորեն ցույց տալ անցման աստիճանը։ Այսպես, ֆրանսերենի ինֆինիտիվը գոյականի վերածված բայ է, բայց դեռևս պահպանում է բայական որոշ հատկանիշներ, ասենք՝ կառավարում է ակտանտներ։ Եվ հենց այդ պատճառով ինֆինիտիվը ավելի քիչ է գոյականացված, քան բայանունը՝ գործողության անվանում, գործչի անվանում և այլն, որն ամբողջովին կորցրել է բայական հատկանիշները՝ արտիկլ և որոշիչ է ընդունում։ Այս առումով խիստ հետաքրքրություն է ներկայացնում հայերենի անորոշ դերբայը։

Ռուս լեզվաբանական գրականության մեջ արժույթ տերմինը առաջին անդամ գործածել է Ս. Դ. Կացնելսոնը։ Նա մասնավորապես գրում է. «Վիարժեք բառը ամեն մի լեզվում բառ չէ ընդհանրապես, այլ բառ է կոնկրետ շարահյուսական ունակություններով, որոնք թույլ են տալիս այն օգտագործել խիստ որոշակի սահմաններում, որ թելադրվում է տվյալ լեզվում քերականական հարաբերությունների զարգացման մակարդակով։ Նախադասության մեջ որոշակի ձևով իրացվելու և այլ բառերի հետ կոմբինացիաների մեջ մտնելու այդ հատկությունը կարելի է կոչել բառի «շարահյուսական արժույթ»[28]։

Պրոֆ. Ջահուկյանը, ըստ բայի հետ կապվող միավորների բնույթի, արժույթը բաժանում է հետևյալ խմբերի՝ ա) ենթակառություն (ձևական-քերականական ենթակա ստանալը կամ չստանալը), բ) ստորոգառություն (ստորոդյալի կամ ստորոգելիական խնդիր ստանալը կամ չստանալը), դ) խնդրառություն՝ տարբեր տիպի խնդիրներ ստանալը կամ չստանալը։ Վերջինս ունի նաև իր մասնավոր դրսևորումները՝ ուղիղ խնդիր ստանալը կամ չստանալը, գերբայառություն՝ դերբայ ստանալը կամ չստանալը, դ) պարագառություն՝ տարբեր տիպի պարագաներ ստանալը կամ չստանալը[29]։

Արժույթի մասին խոսելիս չի կարելի անտեսել նաև խնդրառություն-արժույթ փոխհարաբերության հարցը։ Այս փոխհարաբերությունը ընդունված է հարաբերել լեզու-խոսք հակադրության հետ։ Ըստ որում արժույթը համարել լեզվական պլանի երևույթ, իսկ խնդրառությունը՝ խոսքային, իբրև արժույթի իրացում խոսքի կառուցման ժամանակ։ Այսպես, երբ նշում ենք որևէ բառի արժութային սահմանները, ապա դրանով ցույց ենք տալիս զուգորդվելու նրա պոտենցիալ հնարավորու-

---

28 Տե՛ս Л. З. Сова, նշվ. աշխ., էջ 95։

29 Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 467։

թյունները, իսկ դրանց ամեն մի կոնկրետ իրացումը խոսքի մեջ, այդ բառի խնդրառությունն է։

* * *

Խնդրառության և արժույթի մասին խոսելուց հետո, հարկ ենք համարում խոսել նաև բնորոշ և ոչ բնորոշ խնդրառություն հասկացությունների մասին։ Անմիջապես ասենք, որ խոսքը լեզվաբանության մեջ այժմ բավական լայն տարածում գտած ստանդարտ և ոչ ստանդարտ խնդրառություն հասկացությունների մասին է։ Արդ, ի՞նչ ենք հասկանում բնորոշ և ոչ բնորոշ խնդրառություն ասելով։

Հաճախ խոսվում է այս կամ այն բառի խնդրառության մասին, հաշվի առնելով միայն նրա խոսքամասային պատկանելությունը։ Այսպես, առանց վարանելու կարելի է ասել, որ հայերենի ամեն մի գոյական կարող է ունենալ սեռականով դրված կախյալ բառ։ Կարելի է պնդել նաև, որ հայերենի բայի իմաստային այնպիսի խումբ, ինչպիսին է «ասացական բայ» խումբը, կարող է ընդունել մասին կապով լրացում։ Այս երևույթը կարելի է կոչել բնորոշ խնդրառություն։ Իհարկե, գոյականին և բային հատուկ բնորոշ խնդրառությունների ցուցակը կարելի է համալրել, որ ինքնըստինքյան արդեն հետաքրքրական է, բայց այստեղ ուշագրավ է ինքը փաստը, որ թույլ է տալիս պնդել, թե որոշ խնդրառական ունակություններ հատուկ են ոչ թե այս կամ այն բառին առանձին վերցրած, այլ բառերի ամբողջ դասի, բառերի որոշ իմաստային խմբերի և այլն։ Այսպիսով, քերականական այն ցուցիչը, որ թույլ է տալիս միմյանցից զանազանել բայը և գոյականը, միևնույն ժամանակ կարող է հիմք հանդիսանալ նրանց բնորոշ խնդրառությունը հաստատելու համար։ Այս ամենի կողքին ժամանակակից հայերենում գոյություն ունեն խնդրառության այնպիսի դեպքեր, որոնք հատուկ են ոչ թե որևէ խոսքի մասի կամ բառերի մի այլ մեծ խմբի, այլ որևէ առանձին վերցված բառի կամ բառերի։ Այսպես, վերցնենք ասացական բայերից սերված բայանունների օրինակը։ Արդեն ասվեց, որ այս խմբի բայերին հատուկ է մասին կապով լրացում ընդունելը, իսկ գոյականին, ընդհանրապես, մասին կապով լրացումը խորթ է, բայց ասացական բայերից սերված գոյականները (բայանունները) հիմնականում պահպանում են հիմք-բայի խնդրառական այդ ունակությունը, ընդունելով մասին կապով կախյալ բառ, օրինակ, զեկուցել ինչի (ում) մասին, զեկուցում ինչի (ում) մասին և այլն։ Ուրեմն կարող ենք ասել. ասացական բայերից սերված գոյականները հենց միայն գոյական լինելու շնորհիվ կարող են ունենալ գոյականին բնորոշ բոլոր խնդրառությունները, սա նրանց բնորոշ խնդրառությունն է, բայց մյուս կողմից սրանք

ունեն այնպիսի խնդրառություն, որ բնորոշ չէ գոյականին ընդհանրապես, այլ՝ գոյականի տվյալ կոնկրետ խմբին։ Մի այլ օրինակ ևս՝ արագ նոսանք, անհարկի սպառնալիք, շտապ օգնություն և նման կապակցություններում գործ ունենք բայանունների համար գուցե և սովորական, նույնիսկ բնորոշ, բայց գոյականների համար ոչ բնորոշ խնդրառության հետ։ Ահա այս երևույթը ընդունված է կոչել ոչ բնորոշ խնդրառություն։ Նշենք նաև, որ բնորոշ խնդրառության դեպքում երևույթը կարելի է անմիջապես հիմնավորել։ Ասենք, սեռականով կախյալ բառի հանգես գալը կարող ենք բացատրել առանց անդրադառնալու գլխավոր բառի իմաստին, հենվելով միայն այն փաստի վրա, որ այն գոյական է, մինչդեռ ոչ բնորոշ խնդրառության մեր օրինակում այդքանով բավարարվել և երևույթը բացատրել հնարավոր չէ, պետք է վերադառնալ ետ, պարզել գլխավոր բառի ածանցական պատմությունը և նոր միայն հիմնավորել բայանուն→(գոյական)+մասին կառույցի հնարավորությունը։

Վերը ասվածները թույլ են տալիս ընդունել խնդրառության հետևյալ աշխատանքային սահմանումը. բառերի միջև ցանկացած ստորադասական կապ խնդրառություն է, որ արտահայտվում է ինչպես քերականական կարգերով, այնպես էլ իմաստային հատկանիշներով։

Այստեղից էլ հիմնավորված է թվում այն կարծիքը, թե բնորոշ խնդրառությունը կարելի է նկարագրել զուտ քերականական քննության հիման վրա, մինչդեռ ոչ բնորոշ խնդրառությունը նկարագրելու համար խիստ անհրաժեշտ է դառնում բառաիմաստային հետազոտություն կատարել, որին և նվիրված է հոդվածի հաջորդ մասը։

Մեր կողմից այս բնորոշումը կիրառելու արտահայտությունն է ստորև բերվող գոյականի բնորոշ խնդրառության նկարագիրը։

Սակայն նախ պարզենք, թե ինչ բնորոշ խնդրառությամբ է օժտված գոյականը։ Ուրեմն, այն, ինչ որ պետք է ներկայացվի, հատուկ է գոյականին ընդհանրապես, այսինքն կարող ենք ասել, որ յուրաքանչյուր գոյականի հատուկ է խնդրառական այն պատկերը, որ կներկայացվի ստորև։

Գոյականի բնորոշ խնդրառությունը պարզելու համար վերցրել ենք 465 գոյականական բառակապակցություն, որոնք ըստ կախյալ բառի բաժանվել են հետևյալ տեսակների (ներկայացվում է ըստ նվազող հաճախականության)։

1. Ածական-գոյական—237 դեպք՝ կարճ ճանապարհ, մեծ եռանդ, զուգահեռական գիծ, սպիտակ բիծ և այլն։

2. Սեռականով կախյալ բառ-գոյական—137 դեպք, այդ թվում.

ա) գոյական սեռական հոլովով—67 դեպք՝ փողի տոկոս, հոգու ուժ, բեկի հրաման, արևի ճառագայթ և այլն։

բ) դերանուն սեռական հոլովով—48 դեպք՝ իմ շտապողականությունը, քո հայացքը, նրա կամքը, իր կարծիքը, իրենց այգիները և այլն։

գ) անորոշ դերբայը սեռականով—22 դեպք՝ հնծնելու պատվանդան, սիրելու փափագ, նկարելու թուղթ և այլն։

3. Դերանուն—գոյական—36 դեպք՝ նույն ճանապարհը, այս խոհերը, ինչ-որ կրակ, ամբողջ կուրծքը, մի բլրակ և այլն։

4. Թվական-գոյական—9 դեպք՝ երկու հարկ, երեք հազար սիրտ, չորս դուռ և այլն։

5. Դերբայ—գոյական—46 դեպք, այդ թվում.

ա) հարակատար դերբայ—37 դեպք՝ հարուցած խնդիր, խուզված մորուք, թրջված գուլպա և այլն։

բ) ենթակայական դերբայ—9 դեպք՝ ծաղկող ծառ, խեղդող ծուխ, մոտեցող վտանգ, կախարդող աչքեր և այլն։

Այս ամենը ըստ խոսքի մասերի խմբավորելու դեպքում ստանում ենք հետևյալ պատկերը՝ ածական—237, գոյական—67, բայ—68, դերանուն—84, թվական—9։

* * *

Բառերի (մեր աշխատանքի մեջ բայանունների) խնդրառության հարցերը քննելիս, ինչպես արդեն ասվել է, անհրաժեշտ է ուսումնասիրել լեզվական այնպիսի երևույթներ, որոնք հանդես են գալիս բառային և շարահյուսական մակարդակների հանգուցակետում։

Բառերի շարահյուսական մակարդակի միավորի՝ բառակապակցության, նախադասության մեջ օգտագործելու համար, ի թիվս նրանց այլ հատկանիշների, պետք է ուշադրություն դարձնել նաև նրանց ածանցական պատմության վրա, քանի որ այս վերջինս իր կնիքն է դնում տվյալ բառի կապակցելիական ունակությունների վրա։ Ուստի նախ պարզաբանենք, թե ինչ բան է ածանցական պատմություն հասկացությունը։ Սակայն մինչև այս հասկացությանը անդրադառնալը մի օրինակով ցույց տանք, թե ինչպես կարող է բառակապակցության մեջ փոխվել կախյալ բառաձևը գլխավոր բառի փոփոխման հետ կապված։ Այսպես, ունենք խնդրել, զեկուցել բայերով կազմված տղան խնդրեց, նա զեկուցեց, բառակապակցությունները, որոնց բայերի հետ բայ→բայանուն[30] փոխակերպումը կատարելուց հետո տեսնում ենք, որ պարտադիր է դառնում կախյալ բառի նկատմամբ ևս որոշակի փոխակերպում

---

30 Այս տերմինով այսուհետև նշելու ենք բայական ծագում ունեցող գոյականները։

կատարելը, այն է՝ Դ..→Դ., Տղան խնդրեց→տղայի խնդրանքը, խընդիրը: Նա զեկուցեց→նրա զեկուցումը, զեկույցը և այլն։ Դժվար չէ նկատել, որ կախյալ բառի փոփոխման համար հիմք հանդիսացավ գլխավոր բառի փոխակերպումը բայից անվան, ուստի շատ հաճախ կախյալ բառերի ձևի ընտրության համար խիստ կարևոր է դառնում գլխավոր բառի ածանցական պատմությունը։ Ուրեմն ինչ ենք հասկանում բառի ածանցական պատմությունն ասելով։

Նրևույթը բացատրելու համար օգտվում ենք Ս. Կ. Շահումյանի և Պ. Ա. Սոբոլևայի կողմից «Սերող քերականության հիմունքներ» գրքում առաջադրված հասկացությունների համակարգից[31]։ Հեղինակները ընդունում են ելակետային հետևյալ երկու միավորները՝ R-բառ և L-բառ։ R-բառի օգնությամբ նկարագրվում է սերման վերացարկված կաղապարը, որն իրացվում է L-բառի միջոցով։ Ամեն մի R-բառ սերվում է աստիճանաբար՝ ըստ տակտերի։

R-բառի ամեն մի տակտին L-բառի մեջ համապատասխանում է նրա ածանցական պատմության մի փուլ։ Այսպես, ճանապարհորդել L-բառը եռատակտ է՝ ճանապարհ→ճանապարհորդ→ճանապարհորդել, եռատակտ են նաև դժգոհել (դոհ→դժգոհ→դժգոհել) ժանգոտել (ժանգ→ժանգոտ→ժանգոտել) և այլ բազմաթիվ բառեր։ Վերը բերված L-բառերը R վերացարկված բառերի օգնությամբ ներկայացնելիս հետևյալ տեսքը կունենան՝ RRRO, ուր յուրաքանչյուր R-ին համապատասխանում է սերման մեկ տակտ, իսկ O-ն ամորֆ արմատ-բառ է։ Մեր աշխատանքում օգտվելու ենք R-բառերի երեք տիպերից՝ R_1, R_2 և R_3, ուր R_1-ը բայական ընդհանուր իմաստի ցուցիչ է, R_2-ը՝ գոյականական ընդհանուր իմաստի, իսկ R_3-ը՝ ածականական ընդհանուր իմաստի։ Ներկայացված տերմինները արդեն բավական են վերը բերված բառերի ածանցական պատմությունը ներկայացնելու համար։ Այսպես, ճանապարհորդել բառը կարելի է ներկայացնել R_1, R_2, R_2 O բանաձևով, դժգոհել—R_1 R_3 R_3O։ժանգոտել—R_1 R_3 R_2O և այլն։ Բառերը այս ձևով ներկայացնելը շատ հարմար է նման հետազոտություններ կատարելու համար, քանի որ այս դեպքում բառը հանգես է գալիս իր խորությամբ, այսինքն կարող ենք թափանցել նրա կազմավորման պատմության մեջ։ Ըստ որում այդ պատմությունը ընկալվում է ինչպես իր ամբողջության, այնպես էլ աստիճանականության մեջ։ Վերցնենք արդեն բերված օրինակները։ Պարզ է, որ ճանապարհորդել բայը կազմվել է ճանապարհորդ գոյականից, իսկ վերջինս էլ ճանապարհ գոյականից,

---

31 *С. К. Шаумян, П. А. Соболева,* Основания порождающей грамматики, М., 1969.

այնուհետև՝ գծգռեել-ը կազմվել է դծգռ ածականից, իսկ վերջինս էլ գոհ ածականից, իսկ ժանգոտել-ը կազմվել է ժանգոտ ածականից, իսկ սա իր հերթին ժանգ գոյականից։ Ինչպես արդեն ասվեց, մեր օրինակները կարելի է ներկայացնել $R_1\ R_2\ R_2O$, $R_1\ R_3\ R_3O$ և $R_1\ R_3\ R_2O$ բանաձևերով։ Դժվար չէ նկատել, որ սրանց միջև եղած ընդհանրությունը կապված է ձախից առաջին կամ աջից վերջին R-ի հետ՝ երեք բանաձևում էլ ձախից առաջինը R_1-ն է, ուրեմն մեր երեք օրինակներն էլ բայեր են, բայց տարբեր ածանցական պատմությամբ։ Այսպիսով, R-երի ամբողջությունը հնարավորություն է տալիս ներկայացնել ածանցական պատմության սկիզբը, ընթացքը և ավարտը, իսկ վերջինը, միևնույն ժամանակ, նաև սերման արդյունքն է։ Ուրեմն, եթե ճանապարհորդել ($R_1\ R_2\ R_2O$) բառի ածանցման սկիզբը նշվում է R_2-ով (ճանապարհ), ընթացքը նույնպես R_2-ով (ճանապարհորդ), իսկ ավարտը R_1-ով (ճանապարհորդել), ապա նանապարհորդություն բառի համար կունենանք $R_2\ R_2\ R_2O$ բանաձևը համապատասխան ածանցական պատմությամբ։

Վերը ասվածները ավելի պարզ դարձնելու համար, եղած օրինակներին, որ եռատակտ էին, կարելի է ավելացնել ավելի բարդ օրինակներ՝ $R_2\ R_2\ R_3\ R_2O$ (մտավորականություն), $R_2\ R_3\ R_2\ R_1O$) (բաշխումայնություն, հնչութավորում), $R_2\ R_2\ R_3\ R_2O$) (լուսավորչական), $R_2\ R_3\ R_2\ R_3\ R_2O$ (լուսավորչականություն) և այլն։ Ինչպես տեսնում ենք, բերված բոլոր օրինակներում անցումները գերազանցապես կատարվում են երկրորդական ձևույթների՝ ածանցների օգնությամբ, սակայն հայտնի են դեպքեր, երբ այդ անցումները կատարվում են արմատական ձևույթների օգնությամբ, ըստ որում այստեղ նկատելի է հետևյալ երևույթը՝ նոր ստացված բառը իր խոսքամասային պատկանելությամբ իր բաղադրիչներից որևէ մեկին նման չէ, այսինքն այն «խաչավորման» արդյունք է, օրինակ, թիթեղ (R_2O) և պատ (R_1O) ստանում ենք թիթեղապատ (R_3O)։ Ավելին, նկատելի է հայերենի համար հետևյալ օրինաչափությունը՝ $R_2O+R_1\rightarrow OR_3$) լուսածին, թիթեղապատ, պանրագործ, ինչպես նաև գործ–ով կազմված մյուս բառերը[32]

Աշխատանքում քննարկվելու են բայերի հետևյալ դասերը՝ $R_1\ O$, $R_1\ R_1\ O$, $R_1\ R_2\ O$, $R_1\ R_3\ O$, $R_1\ R_3\ R_2\ O$, $R_1\ R_1\ R_3\ O$ և $R_1\ R_1\ R_2\ O$, և քանի որ մեր հիմնական նպատակն է դիտարկել, թե ինչպես են բայերից սերված գոյականների մեջ պահպանվում բայական խնդրառության հատկանիշները, ուստի ուշադրության կենտրոնում են գտնվե-

---

32 Բացառությամբ այն դեպքերի, երբ –գործ բաղադրիչը նշանակում է գործող՝ օրինակ գարգագործ բառում։

լու այն գոյականական ածանցյալները, որոնք սերվում են նշված բայերի տիպերից։

R_1O

Այս դասի մեջ են մտնում, եթե կարելի է այսպես ասել, «զուտ» բայերը, որոնց ածանցական պատմությունը պարզ է։ Նման բայերը թվով շատ են, ճկուն են, այսինքն օգտագործելիս կամ, ավելի ճիշտ կլինի ասել, որևէ բառի հետ զուգորդվելիս առանձնապես պահանջկոտ չեն՝ ազատ կերպով զուգորդվում են այլ բառերի հետ։ Այս բայերը մի այլ առանձնահատկություն ևս ունեն համեմատած բայերի մյուս տիպերի հետ՝ հեշտությամբ ընդունում են այլ խոսքի մասեր կերտող ածանցներ, հատկապես գոյականակերտ ածանցներ։ Դրանք բնորոշող հատկանիշները առայժմ տրվում են ընդհանուր բնութագրի համար։ Հետագա շարադրանքի մեջ կաշխատենք այս ընդհանուր բնութագրերը հաստատել փաստական տվյալներով։ Այժմ մի քանի օրինակ այս դասի բայերի համար. աշխատել, թարթել, խեղդել, խնամել, առաքել, համբերել, համրել և այլն։

Այս պարզագույն բայերի խնդրառական ունակությունները պայմանավորված են նրանց բուն արժութայնությամբ, և այդ հատկանիշների նկարագրությունը կարելի է տալ միայն բառիմաստին դիմելով։ Մինչդեռ հաջորդ՝ ավելի բարդ բայերի համար խնդրառական ունակություններն վերհանման համար պետք է դիմել նաև նրանց կառուցվածքային առանձնահատկություններին, այն է՝ ածանցական պատմությանը։

$R_1\ R_1\ O$

Սրանք երկտակտ բայեր են, որոնց թե՛ ելակետը և թե՛ արդյունքը բայական են։ Դժվար չէ եզրակացնել, որ սրանք նախորդ տիպի համեմատությամբ ավելի պակաս ճկուն են և՛ զուգորդման և՛ ածանցման հնարավորությամբ։ Այս տիպի բայերը ավելի քիչ են նախորդի համեմատությամբ և գլխավորապես կարող են կազմվել նախորդ տիպի բայերից նախածանցման ճանապարհով։ Բերենք մի քանի օրինակ՝ արտահանել, արտադրել, գերագնահատել, գերակատարել, արտացոլել և այլն։

$R_1\ R_2\ O$

Բայերի այս տիպը կարելի է բնութագրել իբրև գոյականից կազմվածներ։ Սրանք թվով շատ չեն։ Հայերենի զարգացման պատմությանը հետևելիս նկատում ենք, որ այժմ, ավելի քան երբևէ, միտում է նկատվում նման բայեր ստեղծելու, ուստի կարելի է ասել, որ սրանք նախորդների համեմատությամբ ավելի արգասավոր են, այսինքն նման բայեր ստեղծելու ընթացքը կենդանի պրոցես է։ Այս տիպը իր մեջ կա-

բող է ընդգրկել հետևյալ բայերը՝ թելել, խաչել, խմորել, ծխել, ապտակել, բուրել, գաշել, ճաշել, պատել, նկարել, մթերել, ջրել և այլն։

R_1 R_3 O

Այս տիպի բայերը շատ.որոշակի են, քանի որ կազմվում են ածականներից։ Ըստ որում ածականներից բայ կազմելիս օգտվում ենք ինչպես –ել, այնպես էլ –անալ ձևույթից։ Այս տիպի բայերի սերման ընթացքը ևս կենդ.սնի պրոցես է։ Կարելի է բերել հետևյալ օրինակները՝ աղատել, անարգել, գարշել, ապշել, բավարարել, խավարել, աշխուժանալ, ագահանալ, ազնվանալ, ահեղանալ, աղքատանալ, ամրանալ, բարդանալ և այլն։

R_1 R_3 R_2 O

Բայերի այն խումբը, որ մտնում է այս տիպի մեջ շատ որոշակի է, քանի որ բայակազմությանը նախորդող տակտը իրենից ներկայացնում է գոյականից ածական սերելու գործառնություն, ըստ որում այս տակտի համար օգտագործվում են շատ որոշակի ածանցներ՝ –ոտ, ալ|որ, ատ։ Ահա մի քանի օրինակ՝ թանաքոտել, թեփոտել, ժանգոտել, արատավորել, գունատել, ձևավորել, անմահանալ, անամոթանալ և այլն։

R_1 R_1 R_2 O

Բայերի այս խումբը կարելի է բնութագրել սերման հետևյալ կաղապարով՝ գոյականից սերված բայ, որից այնուհետև նախածանցների օգնությամբ ստանում ենք նոր բայ։ Ահա և այս տիպի բայերի օրինակներ՝ հակաճառել, ներշնչել, ներգործել, վերանվանել, ընդգծել և այլն։

R_1 R_1 R_3 O

Այս բայերը սերման հետևյալ կաղապարն ունեն՝ ածականից կազմվում է բայ, իսկ վերջինից էլ դարձյալ նախածանցների օգնությամբ սերվում են նոր բայեր՝ վերստուգել, վերանորոգել, վերընտրել, վերապատրաստել, ընդլայնել և այլն։ Դժվար չէ ենթադրել, որ այս վերջին երեք խմբի բայերը թվով բավական սահմանափակ են և գոյական սերելիս փոքր ճկունություն են հանդես բերում։

* * *

Մինչև բայ→գոյական անցման նկարագրության անցնելը անդրադառնանք բայական այն հիմքերին, որոնց վրա ավելանում են գոյականակերտ ածանցներ՝ բայ-գոյական անցման ժամանակ։ Դեպքերի ճնշող մեծամասնության համար իբրև հիմք ծառայում է անորոշի ձևը առանց դերբայական վերջավորության կամ, ինչպես ընդունված է կոչել հայերենագիտության մեջ, անորոշի հիմքը։ Այս հիմքից գոյականներ են սերում մեր կողմից վերցված 35 տարբեր ածանցներից 33-ը,

բառառությամբ -իմ և -ի ածանցների, որոնք գոյականներ կարող են կազմել ավելանալով բուն անորոշ դերբայի վրա՝ բաժանելիք, ծամելիք, խմելիք, շոշափելիք, ասելիք, սպառնալիք, ծխելիք, արտահանելիք և բաժանելի, որոնելի, ընտրելի և այլն։ -իմ ածանցը միայն անորոշի վրա չէ, որ ավելանում է գոյական կազմելու համար, ճապաղել բայից այդ ածանցով գոյական կազմելիս այն ավելացնում ենք անորոշ հիմքին՝ ճապաղիմ: Որոշ դեպքերում—ություն ածանցը ավելանում է անորոշ դերբայի վրա գոյական կազմելու համար՝ աճելություն, ընդունելություն, խաչելություն: Բայերի մի մասը գոյականակերտ ածանց են ստանում անցյալ կատարյալի հիմքի վրա։ Դա ամենից առաջ վերաբերում է R_1 R_3 O տիպի բայերին, ուր ածականից բայ ստանալու համար ավելացնում ենք ան+ալ ձևույթները՝ ծեր→ծերանալ→ծերացում, խորթ→խորթանալ→խորթացում, աղնիվ→աղնվանալ→աղնվացում, ամուր→ամրանալ→ամրացում և այլն։ Անցյալ կատարյալի հիմքով գոյականներ են սերում նաև լվալ և ասել բայերը՝ լվալ→լվացում, լվացք, լվացարար, լվացարան և ասել→ասացող, ասացվածք։ Այս բայը գոյական կարող է սերել նաև անորոշ հիմքով՝ ասել→ասույթ և անորոշով՝ ասել→ասելիք։

Այժմ անցնենք բայատիպերից գոյական սերելու նկարագրությանը։ Շարադրանքի հարմարությունից ելնելով, դիմում ենք աղյուսակային եղանակին։

Աղյուսակների ձախ կողմում տրվում են սերող բայերը, ինչպես նաև այն հիմքը կամ հիմքերը, որոնց միանալով, գոյականակերտ ածանցները բայանուններ են սերում։ Բայի և ածանցի հատման տեղում դրվում է պլյուս նշան, որը տվյալ բայով և տվյալ ածանցով սերվող բայանվան նշանակություն ունի։ Աղյուսակի կազմման տրամաբանությունը թելադրում էր ազատ վանդակները լրացնել մինուս նշանով, սակայն այն չծանրաբեռնելու համար նպատակահարմար գտանք

Աղյուսակ № 1

դրանց ուղղակի ազատ թողնել։ R_1 $O \rightarrow R_2$ R_1 O

Այս բայատիպից գոյականներ սերելու օրինաչափությունները վերհանելու համար վերցված բայերը աղյուսակում տեղադրվել են ըստ նվազող արգասավորության։ Այսպես, այդ բայերից ամենաարգասավորը բաժանել բայն է, որից սերում է ութ գոյական, իսկ ամենաանարտադրողականը ճերմել բայն է, որից սերում է միայն մեկ գոյական։ Վերցված բայերից գոյականներ սերելուն մասնակցում է 34 գոյականակերտ ածանց, որոնք բաժանվել են իմաստային խմբերի[33]։ Դրանք են՝

---

33 Ինչպես խմբերի անվանումները, այնպես էլ խմբերի մեջ այս կամ այն ածանցը տեղադրելը պայմանական է։

| (ڤرڤڽ) ايمد | مرد | ڤڽڤ | مرڤ جرڎ | ڤ | ڤڤ | ٥ ڎڤمرڤ | جرڎ | ڤمرڤ | ڤمڤ | ڤڤ | ڤڽ | ڤڤ | ڤڽ | ڤڤ | ڤڤ | ڤڤ

۲۱۱ (۲۱۲۱۴)	۲۱۱	۲۱۲	۲۱۳	۲۱۴	۲۱۵	۲۱۶	۲۱۷	۲۱۸	۲۱۹	۲۲۰	۲۲۱	۲۲۲	۲۲۳	۲۲۴	۲۲۵	۲۲۶	۲۲۷	۲۲۸	۲۲۹	۲۳۰	۲۳۱	۲۳۲	۲۳۳	۲۳۴	۲۳۵	۲۳۶	۲۳۷	۲۳۸	۲۳۹	۲۴۰	۲۴۱	۲۴۲	۲۴۳	۲۴۴	۲۴۵	۲۴۶	۲۴۷
۲۱۱ (۲۱۲۱۴)	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
۲۱۲ (۲۱۲۱۴)																																						
۲۱۳ (۲۱۲۱۴)																																						
۲۱۴ (۲۱۲۱۴)																																						
۲۱۵ (۲۱۲۱۴)																																						
۲۱۶ (۲۱۲۱۴)																																						
۲۱۷ (۲۱۲۱۴)																																						
۲۱۸ (۲۱۲۱۴)																																						
۲۱۹ (۲۱۲۱۴)																																						
۲۲۰ (۲۱۲۱۴)																																						
۲۲۱ (۲۱۲۱۴)																																						
۲۲۲ (۲۱۲۱۴)																																						
۲۲۳ (۲۱۲۱۴)																																						
۲۲۴ (۲۱۲۱۴)																																						
۲۲۵ (۲۱۲۱۴)																																						
۲۲۶ (۲۱۲۱۴)																																						
۲۲۷ (۲۱۲۱۴)																																						
۲۲۸ (۲۱۲۱۴)																																						
۲۲۹ (۲۱۲۱۴)																																						
۲۳۰ (۲۱۲۱۴)																																						
۲۳۱ (۲۱۲۱۴)																																						
۲۳۲ (۲۱۲۱۴)																																						
۲۳۳ (۲۱۲۱۴)																																						
۲۳۴ (۲۱۲۱۴)																																						
۲۳۵ (۲۱۲۱۴)																																						
۲۳۶ (۲۱۲۱۴)																																						
۲۳۷ (۲۱۲۱۴)																																						
۲۳۸ (۲۱۲۱۴)																																						
۲۳۹ (۲۱۲۱۴)																																						
۲۴۰ (۲۱۲۱۴)																																						
۲۴۱ (۲۱۲۱۴)																																						
۲۴۲ (۲۱۲۱۴)																																						
۲۴۳ (۲۱۲۱۴)																																						
۲۴۴ (۲۱۲۱۴)																																						
۲۴۵ (۲۱۲۱۴)																																						
۲۴۶ (۲۱۲۱۴)																																						
۲۴۷ (۲۱۲۱۴)																																						

ژاپنی / ژاپن	nsd	wbe	nsBjnsb	e	nB	jnsb	jnse	hz	nq	nB	wb	mpq	wb	nsz	wl	bwk	nsz	ywbe	dnsbe	mse	wn	kse	b	wpwb	wbnB	hzse
ژاپنی / ژاپن (ژاپنی)	+	+			+	+		+	+																	
ژاپنی / ژاپن (ژاپنی)	+	+						+	+																	
مغولستان (مغولستان)	+	+	+						+														+			
ایتالیا (ایتالیا)	+	+				+		+																		
آلمان (آلمان)	+	+			+			+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		
آلمان (آلمان)	+	+						+																		

ﻫﺎﻳﺎﺗﻲ ﺟﻤﻊ	ﻣﺎﺩﻱ	ﻣﺎﺋﻲ	ﻫﻮﺍﺋﻲ	ﺣﺎﺭ	ﺑﺎﺭﺩ	ﻣﻌﺘﺪﻝ	ﺑﺨﺎﺭ	ﻣﺎﺋﻌﺎﺕ	ﺑﺨﺎﺭﺍﺕ	ﺑﺨﺎﺭ ﻣﺎﺋﻲ	ﺑﺨﺎﺭ ﻫﻮﺍﺋﻲ	ﺑﺨﺎﺭ ﺣﺎﺭ	ﺑﺨﺎﺭ ﺑﺎﺭﺩ	ﺑﺨﺎﺭ ﻣﻌﺘﺪﻝ	ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ	ﺑﺨﺎﺭ ﻣﺎﺋﻌﺎﺕ	ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭﺍﺕ	ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﻣﺎﺋﻲ	ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﻫﻮﺍﺋﻲ	ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺣﺎﺭ	ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺎﺭﺩ	ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﻣﻌﺘﺪﻝ	ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ	ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﻣﺎﺋﻌﺎﺕ	ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭﺍﺕ	ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﻣﺎﺋﻲ	ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﻫﻮﺍﺋﻲ	ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺣﺎﺭ	ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺎﺭﺩ	ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﻣﻌﺘﺪﻝ
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ	+	+	+																				
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﻣﺎﺋﻌﺎﺕ	+	+																					
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭﺍﺕ			+																				
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﻣﺎﺋﻲ				+																			
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﻫﻮﺍﺋﻲ					+																		
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺣﺎﺭ						+																	
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺎﺭﺩ							+																
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﻣﻌﺘﺪﻝ								+															
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ									+														
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﻣﺎﺋﻌﺎﺕ										+													
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭﺍﺕ											+												
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﻣﺎﺋﻲ												+											
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﻫﻮﺍﺋﻲ													+										
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺣﺎﺭ														+									
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺎﺭﺩ															+								
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﻣﻌﺘﺪﻝ																+							
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ																	+						
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﻣﺎﺋﻌﺎﺕ																		+					
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭﺍﺕ																			+				
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﻣﺎﺋﻲ																				+			
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﻫﻮﺍﺋﻲ																					+		
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺣﺎﺭ																						+	
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺎﺭﺩ																							+
ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﺑﺨﺎﺭ ﻣﻌﺘﺪﻝ																							

[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible] (Ghirp)	[illegible] (Gumpmwr)	[illegible] (Gwnlab)	[illegible] (Nulm-G)	[illegible] (Bwl)	[illegible] (Lwmbm)	[illegible] (Pnlp)	[illegible] (Yyrl)	[illegible] (Gwm)	[illegible] (Lwmbmlp)	[illegible] (Gwm)	[illegible] (Lwmbm)	[illegible] (Mwlp)	[illegible] (Lwmbm)	[illegible] (Mwlp)	[illegible] (Lwmbm)	[illegible] (Mwlp)	[illegible] (Lwmbm)	[illegible] (Mwlp)	[illegible] (Lwmbm)	[illegible] (Mwlp)	[illegible] (Lwmbm)	[illegible] (Mwlp)	[illegible] (Lwmbm)	[illegible] (Mwlp)	[illegible] (Lwmbm)	[illegible] (Mwlp)	[illegible] (Lwmbm)	[illegible] (Mwlp)	[illegible] (Lwmbm)	[illegible] (Mwlp)	[illegible] (Lwmbm)
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]

1. գործողության անվանում նշանակությամբ գոյականներ կերտող ածանցներ՝ ում, -ություն, -անք,-f, -ոց, յուն, ուստ,-վուք, 2. գործողության կատարման համար անհրաժեշտ անձ, իր, միջոց նշանակությամբ գոյականներ կերտող ածանցներ՝ -իչ, ող,-ոց,-ան, -ուդ,-ակ,-վոր,-արար,-ոն,-իկ,-նակ,-ուչ, 3. գործողության արդյունք նշանակությամբ գոյականներ կերտող ածանցներ՝ -վածք,-մունք[34], ուք,-ատ, 4. տվյալ գործողությունը կրած կամ հետագայում կրելու համար նախատեսված որևէ բան նշանակությամբ գոյականներ սերող ածանցներ՝ -իք,-ի, 5. գործողության կատարման տեղ նշանակությամբ գոյականներ կերտող ածանցներ՝ -արան,-անոց, 6. տվյալ գործողության համար նախատեսված իր նշանակությամբ գոյականներ կերտող ածանցներ՝ -եղեն,-իչք և այլ ածանցներ՝ ուկ-ույթ:

Ինչպես իմաստային խմբերը, այնպես էլ յուրաքանչյուր խմբի մեջ ածանցները նույնպես տեղադրված են ըստ նվազող արգասավորության, հետևաբար, եթե աղյուսակի հորիզոնական շարքը ցույց է տալիս այս կամ այն կոնկրետ բայի արգասավորությունը, ապա ուղղահայաց շարքը՝ որևէ ածանցինը։

1. Գործողության անվանում.— Սա ամենաարգասավոր խումբն է։ Վերցված բայերից 8 ածանցի օգնությամբ սերվում է 142 գոյական։ Այս խմբի ածանցները ըստ նվազող հաճախականության հետևյալ պատկերն են ներկայացնում՝

-ում -70, այսինքն վերցված բայերից միայն 30-ը -ում ածանց չեն ստանում (խեղդել, տեսնել, խոսել, աշխատել, նստել, ասել, հեգնել, հոգնել, քսել, համբերել, զբոսնել, բռնել, կատաղել, սպառնալ, քորել, հարել և այլն)։

-անք -21. այս ածանցով գոյականներ կարելի է սերել հետևյալ բայերից՝ մարդել, սահել, աշխատել, հեգնել, հոսել, օրհնել, համբերել, զբոսնել, արհամարհել, հայհոյել և այլն։

-ություն—17 (բաժանել, աշխատել, մկրտել, ընդունել և այլն)։

-ոց—13 (խեղդել, ծամել, հիշել, նստել, կանչել, սուլել, քրթմնթալ, թարթել, քորել, հաչել, տնքալ, փնչալ, բոթել)։

-f—12. (բաժանել, հնձել, վաճառել, տեսնել, խոսել, լվալ, տարածել, հոսել, հիմնել, խնամել, կաշառել, վաղել)։

-յուն—6. (կանչել, քրթմնչալ, կափկափել, հաչել, ոստնել, սոսափել)։

-ուստ—1 (հագնել), -վուք—1 (խեղդել)։

---

34 Այս ածանցը իրենից ներկայացնում է -ում+ունք ածանցների միացություն և կրկնակի ածանցման արդյունք է՝ բաժանել→բաժանում→բաժանմունք, մտածել→մտածում→մտածմունք և այլն։ Ավելի հարմար գտանք այն տեղադրել առաջին աստիճանի ածանցման ցուցակի մեջ։

2. Գործողության կատարող—Այս խումբը ընդգրկում է 12 ածանց, որոնց օգնությամբ ունեցած բայերից սերվում է 68 գոյական։ Ահա այդ ածանցները ըստ նվազող հաճախականության՝

–իչ–29 (հնձել, ծամել, խեղդել, մարզել, ջնջել, տարածել, սուզել, ընդունել, շարժել, քննել, մեկնել, խնամել, թարթել և այլն)։

–ող—14 (վաճառել, խմել, աշխատել, մտածել, քննել, մթերել և այլն)։

–ոց—7 (ծամել, ջնջել, ծածկել, խմել, հենել, մերել, քորել)։

–որդ—7 (բաժանել, մարզել, վաճառել, գնել, վազել)։

–ան—5 (հնձել, խեղդել, ջնջել, մերել, կարկատել)։

–ակ—5 (հենել, սուզել, հերձել, բռնել, ոստնել)։

–վոր—2 (հնձել, հայցել), արար—2) (բաժանարար, լվացարար)։

–ոն—2. (աճել, ծամել), –իկ—1. (մարզիկ),—նակ—2 (սահել, խոսել), –ուչ—1. (տեսնել), –անակ—1 (ըմպանակ)։

Ածանցների երկու խմբի մասին խոսելուց հետո հարկ ենք համարում անդրադառնալ –ոց ածանցին։ Ինչպես տեսանք, –ոց ածանցը տեղ է գտել և «գործողության անվանում» խմբի մեջ և «գործողության կատարող» խմբի մեջ։ Այդ ածանցը գոյական սերելիս ընդհանրապես և բայանուններ սերելիս մասնավորապես խիստ ընդգծված երկիմաստություն է հանգես բերում։ Ըստ որում երկիմաստության աղբյուրը սերող բայի ածանցական պատմության մեջ փնտրելը անիմաստ է, քանի որ այժմ խոսում ենք ածանցական տեսակետից «անթերի» բայերի մասին։ Դիմեցինք այդ ածանցով գոյականներ սերող բայերի իմաստին։ Պարզվեց հետևյալ պատկերը՝ –ոց ածանցով գործողության անվանում նշանակությամբ 12 գոյական սերվում է խեղդոց, ծամոց, հիշոց, քորոց, նստոց, սուլոց, քրթմնջոց, հաչոց, տնքոց, փնչոց, բոթոց, որոնցից առաջին երեքը ներգործական սեռի բայերից, իսկ վերջին 9-ը՝ չեզոք սեռի բայերից։ Նույն ածանցը գործողության կատարող նշանակությամբ յոթ գոյական է սերում (ծամոց, ջնջոց, ծածկոց, խմոց, հենոց, քորոց, վազոց), որոնցից առաջին վեցը՝ ներգործական սեռի բայերից, իսկ վերջին մեկը՝ չեզոք սեռի բայից։ Ինչպես տեսնում ենք, որոշ բացառություններով հանդերձ, այս դեպքում կարելի է նշել հետևյալ օրինաչափությունը՝ –ոց ածանցով չեզոք սեռի բայերից սերվում են գործողության անվանում նշանակությամբ բայանուններ, իսկ ներգործական սեռի բայերից՝ գործողություն կատարող նշանակությամբ բայանուններ։ Այս դեպքի համար վերցված բայերից երկուսը՝ ծամել և քորել,–ոց ածանցով բայանուններ են սերում թե՛ մեկ և թե՛ մյուս նշանակությամբ։

Բացի այդ, ուշադրության է արժանի նաև հետևյալ երևույթը, –ոց ածանցով գործողության կատարող նշանակությամբ բայանուններ են սերում «Ա» խոնարհման պարզ բայերի ճնշող մեծամասնությունը (ո-

ռոնք, ինչպես հայտնի է, գլխավորապես բնաձայնական ծագում ունեն և չեզոք սեռ), բացառությամբ «Ա» խոնարհման, ներգործական սեռի պարզ բայերից։ «Ա» խոնարհման մյուս բոլոր բայերից («ան», «ն» սոսկածանցավոր), ինչպես նաև «Ե» խոնարհման «ն» և «ան», «չ» սոսկածանցավոր բայերից -ոց *ածանցով բայանուններ ընդհանրապես չեն սերվում։*

3. Գործողության կատարման արդյունք.—*Այս խումբը ընդգրկում է 4 ածանց՝* -վածք,-մունք,-ուք,-ատ, *որոնց օգնությամբ 26 բայից սերվում է 28 բայանուն։*

-վածք—*17 (հնձել, ծամել, մղել, ջնջել, խոսել, նստել, վիճել, գնել, շարժել, ասել, հայցել, հագնել, կանդնել, կծել, բռնել, խզել, նայել)։*

-մունք—*7 (բաժանել, հիշել, վիժել, մտածել, շարժել, հարձակվել, հիմնել)* -ուք—*3 (մզել, լվանալ, քսել)։*

-ատ—*1 (ողողել)։*

4. Տվյալ գործողությունը կրած կամ կրելու համար նախատեսված առարկա.—*Այս խումբը ընդգրկում է 2 ածանց՝* -իք *և* ի, *որոնց նմանությամբ 17 բայից սերվում է 19 բայանուն։*

-իք—*17 (բաժանել, ծամել, տեսնել, ծածկել, խոսել, խմել; հիշել, նստել, գնել, շոշափել, ասել, հագնել, քսել, ըմպել, համբերել, սպառնալ, կարծել).*

-ի—*2 (բաժանել, որոնել)։*

5. Գործողության կատարման տեղը.— *Ընդգրկում է 2 ածանց՝* -արան, -անոց *և 17 բայից սերում է 29 բայանուն։*

-Արան—*16 (խեղդել, մարզել, սահել, տեսնել, ծածկել, խոսել, լվանալ, նստել, նկատել, հենել, սուզել, մկրտել, ընդունել, ըմպել, հերձել, դրոսնել)։*

-անոց—*4 (խեղդել, վաճառել, աշխատել, գրոսնել)։*

6. Տվյալ գործողության համար նախատեսված իր.—*Ընդգրկում է 2 ածանց՝*—եղեն,—իչք, *որոնց միջոցով 2 բայից սերում է 2 բայանուն։*

-եղեն- *ըմպելեղեն և* -իչք *-խմիչք, ըստ որում* -եղեն *ածանցի իմաստը շատ ավելի ուժեղ է, իսկ ինքը ածանցը՝ արտադրողական, մինչդեռ* -իչք *ածանցի իմաստը որոշ չափով մթագնվել է այն աստիճան, որ այժմ բավական լայն տարածում է գտել խմիչքեղեն ձևը։*

7. Այլ ածանցներ.— *Ընդգրկում է ընդամենը 2 ածանց՝*-ուկ, -ույթ, *որոնց միջոցով 9 բայից սերվում է 11 բայանուն՝*

-ուկ—7 (*աճել, մղել, սահել, տարածել, վիժել, շոշափել, հանել)։*

-ույթ—*4 (ծածկել, ասել, շահել, հանել)։*

$R_1\ R_1\ O \rightarrow R_2\ R_1\ R_2\ O$

[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible] (Sahwalzi)	+											
[illegible] (Sumpalgi)	+	+										
[illegible] (Yu-wazi)	+	+	+									
[illegible] (Gumrsakmi)	+											
[illegible] (Phlamgsu-sumi)			+									
[illegible] (Sumpuwa)	+	+	+									
[illegible] (Sumpuwa-pi)	+											
[illegible] (Yilkpuzi)	+											
[illegible] (Yilkpuzi)	+											
[illegible] (Yilkpuzi)	+	+	+	+	+	+

[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible] (Sibirien)	+	+										
[illegible] (Kaukasus)	+	+										
[illegible] (Kaukasus-Länder

[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible] (دلهرمسوزلبخ)	+										
[illegible] (دلهرمسوزلبخ)	+										
[illegible] (دلهرمسوزلبخ)	+										
[illegible] (دلهرمسوزلبخ)	+										
[illegible] (دلهرمسوزلبخ)	+										
[illegible] (دلهرمسوزلبخ)	+										
[illegible] (دلهرمسوزلبخ)	+										
[illegible] (دلهرمسوزلبخ)	+										
[illegible] (دلهرمسوزلبخ)	+										
[illegible] (دلهرمسوزلبخ)	+										
[illegible] (دلهرمسوزلبخ)	+										
[illegible] (دلهرمسوزلبخ)	+										
[illegible] (دلهرمسوزلبخ)	+										
[illegible] (دلهرمسوزلبخ)	+										
[illegible] (دلهرمسوزلبخ)	+										
[illegible] (دلهرمسوزلبخ)	+										
[illegible] (دلهرمسوزلبخ)	+										
[illegible] (دلهرمسوزلبخ)	+										
[illegible] (دلهرمسوزلبخ)	+										
[illegible] (دلهرمسوزلبخ)	+										

Աղյուսակ № 2

Այս անցման օրինաչափությունները պարզելու համար քննել ենք 60 բայ, որոնցից 13 ածանցի օգնությամբ սերվել է 117 բայանուն։

1. Գործողության անվանում.— *Ունենք 5 ածանց, որոնց օգնությամբ 68 բայերից սերվում է 109 բայանուն։*

–ում— *60 (այս ածանցով բայանուն չի սերում միայն* նախավաճառել *բայը)։*

–ություն— *33 (արտահանել, վերածնել, արտագրել, վերաքննել և այլն)։*

–f— *5 (վերավաճառել, արտացոլել, ներհոսել, վերացնել, նախավաճառել)։*

–անf— *1 (արտացոլել)։*

–ունդ— *1 (վերածնել)։*

2. Գործողության կատարող.— *Ունենք 4 ածանց, որոնց միջոցով 12 բայերից սերվում է 15 բայանուն։*

–իչ— *10 (արտահանել, արտացոլել, վերահսկել, վերածնել, հակազդել, վերստուգել, վերաքննել, վերաստեղծել, վերարտակել, վերականգնել)։*

–որդ— *3 (վերավաճառել, արտահանել, վերագնել)։*

–ող— *1 (վերահսկել)։*

–ակ— *1 (հակազդել)։*

3. Գործողության կատարման արդյունք.— *2 ածանց, որոնց օգնությամբ 4 բայից սերվում է 4 բայանուն։*

–վածf— *3 (վերավաճառել, արտագրել, համաձուլել)։* –մունf— *1 (նախապաշարմունք)։*

4. Ցվյալ գործողությունը կրած կամ կրելու համար նախատեսված առարկա.— *Ընդգրկում է 2 ածանց՝*

—իf և ուկ, *որոնք սերում են մեկական բայանուն՝* արտահանելիf *և* վերապրուկ։

$R_1R_2O \rightarrow R_2R_1R_2O$

Աղյուսակ № 3

Այստեղ ընդգրկվել է 60 բայ, որոնցից 24 ածանցի օգնությամբ սերվում է 156 բայանուն։

1. Գործողության անվանում.— *Ընդգրկում է 8 ածանց, որոնք միանալով* R_1 R_2O *տիպի բայերին սերում են 82 բայանուն, այսինքն այս տիպի բայանուններից ավելի քան կեսը։ Ըստ նվազող արտադրողականության այս խմբի ածանցները հետևյալ պատկերն են ներկայացնում։*

–ում— *54 (այս ածանցով բայանուններ չեն սերվում հետևյալ բայերից՝ ճաշել, դողալ, մեխել, մաշկել, կասկածել, քարոզել)։*

ژمارەی ڤایرۆس	مارک	سوبە	ئەو	جەنگ	ئەنجامی ڤایرۆس	ئەو	ڤایرۆس	مەرگ	ئەوە	هەر	ئەمە	ئەوە	ئەمە	ئەوە	ئەمە	ئەوە	ئەمە	ئەوە	ئەمە	ئەوە	ئەمە	ئەوە	ئەمە	ئەوە	ئەمە	ئەوە	ئەمە	ئەوە	ئەمە	ئەوە
ڤایرۆسی (١)	+																													
ڤایرۆسی (٢)	+																													
ڤایرۆسی (٣)	+																													
ڤایرۆسی (٤)	+																													
ڤایرۆسی (٥)	+																													
ڤایرۆسی (٦)	+																													
ڤایرۆسی (٧)	+																													
ڤایرۆسی (٨)	+																													
ڤایرۆسی (٩)	+																													
ڤایرۆسی (١٠)	+																													
ڤایرۆسی (١١)	+																													
ڤایرۆسی (١٢)	+																													
ڤایرۆسی (١٣)	+																													
ڤایرۆسی (١٤)	+																													
ڤایرۆسی (١٥)	+																													
ڤایرۆسی (١٦)	+																													
ڤایرۆسی (١٧)	+																													
ڤایرۆسی (١٨)	+																													
ڤایرۆسی (١٩)	+																													
ڤایرۆسی (٢٠)	+																													
ڤایرۆسی (٢١)	+																													
ڤایرۆسی (٢٢)	+																													
ڤایرۆسی (٢٣)	+																													
ڤایرۆسی (٢٤)	+																													

Ресу (сфера)	пеф	шъе	пд	лъсъ	пгсДъсъ	е	мсфц	пдф	ЬЗ	мсрмр	пгрз	пд	пз	ус	ус	пъ	фшъе	фпсъре
Ирлрфъ (рфлгр)	+																	
Ифлъ (ифе)	+		+															
Слфъ (ъ.з)	+										+							
ЗЬЗЬ (ЗЬ)	+																	
ммрсъфсъ (ммрсъфсъ.м)	+	+	+		+							+						
ЗфЗфЬ (ЗфЗфЬ)	+																	
ЗлмЗъ (ЗлмЗъ.і)	+	+		+														
ЗрмЗъ (ЗрмЗъ.е)	+	+																
ЗрмЗъ (ЗрмЗъ.е)	+																	
мрлДъ (мрлДъ)	+																	
Зъ.Ьфъ (Зъ.Ьфъ)	+																	
Ьлфъ (ъ.и)	+																	
ЗлрЗъ (ъ.и)	+																	
ЗлрЗъ (ЗлрЗъ.е)	+																	
ЗлрЗъ (ЗлрЗъ.е)	+																	
ЗлрЗъ (ЗлрЗъ.е)	+																	
ЗлрЗъ (ЗлрЗъ.е)	+																	
ЗлрЗъ (ЗлрЗъ.е)	+																	
ЗлрЗъ (ЗлрЗъ.е)	+																	
ЗлрЗъ (ЗлрЗъ.е)	+																	
ЗлрЗъ (ЗлрЗъ.е)	+																	
ЗлрЗъ (ЗлрЗъ.е)	+																	
ЗлрЗъ (ЗлрЗъ.е)	+																	
ЗлрЗъ (ЗлрЗъ.е)	+																	

Ряд (ряд)	пеф	жйе	пд	лиєй	пєблиєй	е	шрй	пєлв	ві	шрвшр	пррч	пд	пч	ліир	ші	шй	пй	цішре
Іурвшрпі (шмлм)	+								+									
Ігдшрпі (ціпрпд)	+																	
Ігдшрпі (ціпрпд)		+																
Ігдшрпі (ціпрпд)																		
Ігдшрпі (ціпрпд)																		
Ігдшрпі (ціпрпд)																		
Ігдшрпі (ціпрпд)																		
Ігдшрпі (ціпрпд)																		
Ігдшрпі (ціпрпд)																		
Ігдшрпі (ціпрпд)																		
Ігдшрпі (ціпрпд)																		
Ігдшрпі (ціпрпд)																		
Ігдшрпі (ціпрпд)																		
Ігдшрпі (ціпрпд)																		
Ігдшрпі (ціпрпд)																		
Ігдшрпі (ціпрпд)																		
Ігдшрпі (ціпрпд)																		
Ігдшрпі (ціпрпд)																		
Ігдшрпі (ціпрпд)																		

-անք— 10 (խոխոջալ, կապել, հառաչել, կծկել, տարակուսել, ղողանջել, հրապուրել, աքսորել, սարսափել, կասկածել)։
-ոց— 8 (ջարդել, ձմեռել, խոխոջալ, խայթել, կապել, խմորել, շնչել, դողալ)։
-յուն— 4 (ղողանջել, մարմաջել, խոխոջալ, հառաչել)։
-ություն— 3 (մատնել, կծկել, խաչել, տարակուսել)։
-ք— 1 (հառաչել),—արկ— 1 (հաշվարկել) և -ոցք— 1 (դողոցք)։

2. Գործողության կատարող.— 8 ածանց, որոնցով՝ 45 բայանուն։
-իչ— 19 (հաշվել, պատժել, խայթել, դանձել, մատնել, կապել, խմորել, խթանել, նկարել, հոլովել, խրատել, քարողել և այլն)։
-արար— 6 (ջարդել, ձևել, հաշվել, պատժել, կիսել)։
-որդ— 6 (կշռել, հաշվել, ճաշել, հարվածել, լծել, կիսել)։
-ոց— 6 (կշռել, ջարդել, ծխել, խայթել, կապել, հերկել)։
-ող— 4 (ձևել, ծխել, ձմեռել, մատնել),—վոր— 2 (հողվոր, հերկվոր)։
-ան— 1 (հորել), -ոն— 1 (ջարդել)։

3. Գործողության կատարման արդյունք.— Ընդգրկում է 4 ածանց, որոնցով՝ 13 բայանուն։
-վածք— 8 (ջարդել, կշռել, խայթել, խաչել, լծել, հողել, ներկել, մեխել)։
-մունք— 3 (խոխոջալ, շնչել, բուրել),
-ուք— 1 (մաղուք)։
-ուցք— 1 (մաղուցք)։

4. Տվյալ գործողությունը կրած կամ կրելու համար նախատեսված առարկա.—Ընդգրկում է 1 ածանց, որոնցով՝ 2 բայանուն։
-իք— 2 (ծխել, ճաշել)։

5. Գործողության կատարման տեղ.— Ընդգրկում է 2 ածանց, որոնցով 5 բայանուն։
-արան— 4 (ձևել, ծխել, պատժել, ճաշել)։
-անոց— 1 (ձմեռանոց)։

6. Այլ ածանցներ
-ուլք— 2 (կշռել, դանձել), -ուկ— 2 (ձմեռել, խայթել)
-անակ— 1 (գանձանակ)։

$R_1\ R_3\ O \rightarrow R_2\ R_1\ R_3\ O$

Աղյուսակ № 4

Այս անցման օրինաչափությունները վերհանելու համար վերցրել ենք 55 բայ, որոնց ածանցական պատմությունը ներկայանում է $R_1\ R_3\ O$

(1)ফর্ম নং ৪

ক্রমিক নং	নাম	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
১	মোঃ জুয়েল রানা	+	+																		
২	মোঃ আলমগীর	+	+																		
৩	মোঃ রিপন মিয়া	+	+																		
৪	মোঃ রুবেল মিয়া	+									+										
৫	মোঃ সুমন মিয়া	+																			
৬	মোঃ সোহেল মিয়া	+																			
৭	মোঃ সাকিব মিয়া	+																			
৮	মোঃ সাকিল মিয়া	+																			
৯	মোঃ রাকিব মিয়া	+																			
১০	মোঃ রাকিব হোসেন	+																			
১১	মোঃ সাকিব হোসেন	+																			
১২	মোঃ সুমন হোসেন	+																			
১৩	মোঃ রাকিব হোসেন	+																			
১৪	মোঃ সাকিল হোসেন	+																			
১৫	মোঃ রুবেল হোসেন	+																			
১৬	মোঃ জুয়েল হোসেন	+																			
১৭	মোঃ আলমগীর হোসেন	+																			
১৮	মোঃ রিপন হোসেন	+																			
১৯	মোঃ রুবেল হোসেন	+																			
২০	মোঃ সুমন হোসেন	+																			
২১	মোঃ সোহেল হোসেন	+																			
২২	মোঃ সাকিব হোসেন	+																			
২৩	মোঃ সাকিল হোসেন	+																			

रुपाई (ईश्वर)	रुपा	नेपाल	चितवन	गण्डकी	नवलपरासी	लुम्बिनी	रुपन्देही	कपिलवस्तु	दाङ	बाँके	बर्दिया	सल्यान	रुकुम	प्युठान	गुल्मी	अर्घाखाँची	म्याग्दी	बागलुङ	पर्वत	स्याङ्जा	कास्की	लमजुङ	तनहुँ	नुवाकोट	धादिङ	रसुवा	सिन्धुली	रामेछाप	दोलखा	भक्तपुर	काठमाडौं	ललितपुर	काभ्रेपलाञ्चोक	सिन्धुपाल्चोक	मकवानपुर	रौतहट	बारा	पर्सा	चितवन	नवलपरासी (बर्दघाट सुस्ता पूर्व)
ऋ. 18	0-अर्घा	+																																							
अमरसिंह (अमरसिंह)		+																																							
हरिप्रसाद (हरिप्रसाद)		+																																							
हिमालचन्द्र (हिमालचन्द्र)		+																																							
ज्ञानेन्द्र (ज्ञानेन्द्र)		+																																							
नारायणदास (नारायणदास)		+																																							
मुक्तिनाथ (मुक्तिनाथ)		+																																							
हरिप्रसाद (हरिप्रसाद)		+																																							
हरिप्रसाद (हरिप्रसाद)		+																																							
धनमान (धनमान)		+																																							
धनमान (धनमान)		+																																							
धनमान (धनमान)		+																																							
धनमान (धनमान)		+																																							
धनमान (धनमान)		+																																							
धनमान (धनमान)		+																																							
धनमान (धनमान)		+																																							
धनमान (धनमान)		+																																							
धनमान (धनमान)		+																																							
धनमान (धनमान)		+																																							
धनमान (धनमान)		+																																							
धनमान (धनमान)		+																																							
धनमान (धनमान)		+																																							
धनमान (धनमान)		+																																							
धनमान (धनमान)		+																																							
धनमान (धनमान)		+																																							
धनमान (धनमान)		+																																							

բանաձևով։ Բայերի այդ քանակից 17 ածանցի օգնությամբ սերվել է 109 բայանուն։

1. Գործողության անվանում.— 5 ածանցով՝ 70 բայանուն։

-ում- այս ածանցով բայանուն է սերվում բոլոր 55 բայերից անխտիր։ Այս տիպի բայերից բայանուններ սերելիս -ում ածանցը որևէ սահմանափակում չունի։

-անք— 12 (ընտրել, զրկել, անարգել, գարշել, թոթովել, բարգավաճել և այլն)

-ոց— 1 (խառնել),— ություն— 1 (ընտրել),— յուն 1 (դողդոջել)։

2. Գործողության անվանում.—5 ածանցով՝ 20 բայանուն։

-իչ— 16 (ընտրել, խառնել, ձգել, աղատել, ողորկել, զրկել, անարգել, սեղմել, անջատել, հարթել, պղտորել, կռվել)։

-ող— 1 (ընտրել), -ան— 1 (ձգել), -ակ— 1 (սեղմել) և առար— 1 (աղատել)։

3. Գործողության կատարման արդյունք.— 2 ածանցով՝ 6 բայանուն։

-վածք— 4 (խառնել, թեքել, շեղել, հաշողվել)։

-ունք— 2 (հուզել, շփոթել)։

4. Տվյալ գործողությունը կրած կամ կրելու համար նախատեսված առարկա.— 2 ածանցով 6 բայանուն՝

-իք— 5 (ընտրել, խառնել, հայտնել, հաստատել, ճապաղել)։

-ի— 1 (ընտրելի)։

5. Գործողության կատարման տեղ

-արան— 4 (խառնել, ձգել, ողորկել, մաքրել)։

6. Այլ ածանցներ.—

ույթ —2 (ընտրել, թեքել) և -ուկ—1 (խառնել)։

$R_1\ R_1\ R_2O \rightarrow R_2\ R_1\ R_1\ R_2\ O$

Աղյուսակ № 5

Այս տիպի բայերը բայանուն են սերում 6 ածանցի միջոցով, որոնց օգնությամբ 20 բայից սերվում է 29 բայանուն։

1. Գործողության անվանում.— 3 ածանցով՝ 25 բայանուն։

-ում- այս ածանցով միայն նախանշել բայն է, որ բայանուն չի սերում։

-ություն— 5 (հակաճառել, հակակշռել, ներգործել, արտաշնչել և փոխաբերել)։

-անք—1 (ներշնչել)։

բայ (հիմք)	ում	ությունն	անք	իչ	ող	իք
ընդօրինակել (ընդօրինակ)	+			+	+	
համակարգել (համակարգ)	+			+		
լսաճառել (հակաճառ)	+	+				
հակակշռել (հակակշռ)	+	+				
ներշնչել (ներշնչ)	+		+			
ներգործել (ներգործ)	+	+				
արտաշնչել (արտաշնչ)	+	+				
փոխատնկել (փոխատնկ)	+					
վերակշռել (վերակշռ)	+					
վերահաշվել (վերահաշվ)	+					
վերանվանել (վերանվան)	+					
վերապատկերել	+					
փոխարեռնել (փոխարեռն)	+	+				
գերակշռել (գերակշռ)	+					
ընդդծել (ընդդծ)	+					
շաղկապել (շաղկապ)	+					
համախմբել (համախմբ)	+					
ընդդրկել (ընդդրկ)	+					
նախաճաշել (նախաճաշ)						+
վերագեղչել (վերագեղչ)	+					

2. Գործողության կատարող.— *2 ածանցով՝ 3 բայանուն։*
-իչ— *2 (ընդօրինակել, համակարգել)* և ող— *1 (ընդօրինակել)։*

3. Տվյալ գործողությունը կրած կամ կրելու համար նախատեսված առարկա.— *1 ածանցով՝ մի բայանուն՝* -իք— *նախաճաշելիք)։*

$R_1\ R_3\ R_2\ O \rightarrow R_2\ R_1\ R_3\ R_2\ O$

Աղյուսակ № 6

Այս անցմանը մասնակցում է 2 ածանց, որոնց օգնությամբ 15 բայից սերվում է 17 բայանուն՝

-ում— *այս ածանցը սահմանափակում չունի։*
-իչ— *2 (արգասավորել, գունավորել)։*

$R_1\ R_1\ R_3\ O \rightarrow R_2\ R_1\ R_1\ R_3\ O$

Աղյուսակ № 7

Այստեղ ընդգրկվել է ընդամենը 8 բայ, որոնցից 3 ածանցի օգնությամբ սերվում է 15 բայանուն։

–ում– (այս ածանցը սահմանափակում չունի)։

–ություն– 5 (վերանորոգել, վերընտրել, վերապատրաստել, վերահաստատել, վերակրթել)։

–իչ–2 (վերստուգել, վերանորոգել)։

Աղ. 6

բայ (հիմք)	ում	իչ
արգասավորել (արգասավոր)	+	+
թարախոտել (թարախոտ)	+	
գունավորել (գունավոր)	+	+
ճյուգավորել (ճյուգավոր)	+	
ճարպոտել (ճարպոտ)	+	
անմահանալ (անմահաց)	+	
թանաքոտել (թա՛ւաքոտ)	+	
խմորոտել (խմորոտ)	+	
շնչավորել (շնչավոր)	+	
ձևավորել (ձևավոր)	+	
արատավորել (արատավոր)	+	
գունատել (գունատ)	+	
թեփոտել (թեփոտ)	+	
ժանգոտել (ժանգոտ)	+	
հոգոտել (հոգոտ)	+	

Աղ. 7

բայ (հիմք)	ում	ություն	իչ
վերստուգել (վերստուգ)	+		+
վերանորոգել (վերանորոգ)	+	+	+
վերընտրել (վերընտր)	+	+	
վերապատրաստել (վերապատրաստ)	+	+	
վերահաստատել	+	+	
վերակրթել (վերակրթ)	+	+	
վերաբացել (վերաբաց)	+		
ընդլայնել (ընդլայն)	+		

* * *

Հնարավորություն չունենալով մեկ հոդվածի սահմաններում ներկայացնելու նշված բոլոր բայանունների խնդրառության հարցը, կբավարարվենք մի քանիսով միայն։

Կասկած չի հարուցում այն դրույթը, որ բայանունները ստեղծվում են բայի գործածության սահմանները ընդարձակելու, դրանք այլ, մասնավորապես, անվանական ոլորտում կիրառելու համար։ Լեզուն,

կարծեք թե, հոդ է տարել այդ մասին և գոյություն ունեն այնպիսի ածանցներ, որոնք մի տեսակ նեղ մասնագիտացում են ստացել բայ→ բայանուն սերմանը մասնակցելու համար և հենց այդ ածանցներն են, որ առավել հզորություն են հանդես բերում մեզ հետաքրքրող սերման ժամանակ։

Ներկայացրած աղյուսակների հորիզոնական շարքերը դիտարկելիս աչքի է ընկնում հետևյալ հանգամանքը. նույն հիմքից սերված բայանունները որոշակի հոմանիշ շարք են կազմում։ Եվ քանի որ աղյուսակներում բառակազմական ձևույթները արդեն իսկ բաժանված են իմաստային խմբերի, ուստի այժմ, հենվելով այդ բաժանման վրա, ներկայացնենք հոմանիշ շարքը՝ նպատակ ունենալով ցույց տալ մի կողմից բառակազմական կաղապարի արդասավորության և խնդրառության, մյուս կողմից՝ սերված բառի և խնդրառության միջև եղած կապը։

Այստեղ հիմնական ուշադրությունը պետք է կենտրոնացնենք հիմք-բառի և նրանից ածանցյալների (տվյալ դեպքում բայի և բայանվան) միջև իմաստային փոխհարաբերության, ինչպես նաև այս կամ այն բառակազմական կաղապարի արդասավորության և այդ կաղապարով սերված բայանվան ու հիմք-բայի խնդրառական ընդհանրությունների հարցի վրա։ Վերը ասվածը ավելի մանրամասնելու դեպքում կարելի է առաջադրել հետևյալ հարցադրումը. ի՞նչ չափով և ի՞նչպես է պահպանվում հիմք- բայի իմաստը նրանից ածանցված բայանունների մեջ։

Այս նպատակով արդեն ընդունված ածանցյալ, հիմք-բառ, բայանուն հասկացությունների կողքին ավելացնում ենք նաև բառարույն տերմինը, որի տակ հասկանալու ենք միևնույն հիմքից ածանցված բառերի ամբողջությունը։

Բավարարվելով նախնական այս բացատրությամբ, անցնենք կոնկրետ բառաբների նկարագրությանը։ Սակայն, մինչև հիմքին և նրա ածանցյալների ամբողջության միջև այս կամ այն կապի վերհանումը, անհրաժեշտ է ունեցած բայերը ստորաբաժանել ըստ անցողականության և ըստ արժութայնության, այն պարզ պատճառով, որ հիմք-բայի և նրա ածանցյալների խնդրառական ընդհանրությունները վերհանելիս մեծ կարևորություն է ստանում հիմք-բայի բնույթը և արժութայնությունը։

Մեր կողմից ընդգրկված բայերը իրենց ճնշող մեծամասնությամբ (43) անցողական բայեր են, բացառությամբ՝ 1. աճեց, 2. խոսեց, 3. աշխատեց, 4. մտածեց 5. հոսեց, 6. զրոսնեց, 7. վիժեց բայերի, որոնք անանցողական են և բաժանվում են հետևյալ երկու իմաստային խմբ-

բերի՝ ա) շարժում ցույց տվող (1, 3, 5, 6, 7) և բ) ասացական (2,4)։ Իհարկե սա չի նշանակում, որ անցողական բայերում իմաստային այս խմբի ներկայացուցիչներ չեն լինի։

Այժմ այդ երկու խմբի բայերը ներկայացնենք ըստ արժութայնության։ Ինչպես վերը նշվել է, արժութայնությունը որոշելու ամենահարմար միջոցը հարցերի եղանակն է. բաժանեց-ով, ում, ինչ, ծամեց-ով, ինչ։ Եվ քանի որ բոլոր դեպքերում, անկախ բայի անցողականությունից, իմաստային խմբից և այլն, ով հարցը միշտ կրկնվում է, ուստի այդ հարցը բաց կթողնենք, ենթադրելով, որ այն միշտ գոյություն ունի։ Արժութային խմբեր ներկայացնելիս ի նկատի կունենանք նաև այդ հարցին պատասխանող անգամը։

1. Անցողական բայեր

ա) Եռարժույթ –ում, ինչ

Բաժանեց, վաճառեց, հայցեց, քսեց, քննեց, մեկնեց, առաքեց, վերավաճառեց, մատնեց։

բ) Երկարժույթ ինչ (ում)

Խեղդեց, ծամեց, մարզեց, շնչեց, ծածկեց, խմեց, կանչեց, նվագեց, հենեց, տարածեց, ընդունեց, գնեց, շարժեց, շոշափեց, հեգնեց, հագավ, օրհնեց, քննեց, մեկնեց, մթերեց, խնամեց, թարթեց, արտահանեց, վերահսկեց, վերածնեց արտատպեց, համաձուլեց, վերապրեց, վերականգնեց, հետաքննեց, կշռեց, շարգեց, հաշվեց, գանձեց։

Միարժույթ անցողական բայերի մասին խոսք լինել չի կարող։

2. Անանցողական բայեր

Ասվեց, որ արանք մեր ցուցակում ընդամենը յոթն են և բաժանվում են երկու խմբի։

Ասացական բայերի բերված խումբը, ինչպես և մեր կարծիքով բուն ասացական բայերը ընդհանրապես խնդրառում են անհրաժեշտաբար, իբրև կախյալ անդամ ունենալով որևէ բառ մասին կապի հետ՝ խոսեց մի բանի մասին, նույնպես և մտածեց, ասաց, կարծեց, պատմեց, զեկուցեց, երգեց և այլն։ Մյուս՝ շարժում ցույց տվող բայերի խումբը միարժույթ է, մի բան, որ նույնպես հատուկ է այդ կարգի բայերին ընդհանրապես։

1. Բաժանել-բառաբույնը ութանդամ է։

ա) բաժան–ում

Այս բառով ամենից առաջ անվանվում է հիմք-բայի գործողությունը։ Գործողությունը անվանելը այս կաղապարով սերված բառերի ամենասովորական հատկանիշն է։ Բացի իր այս, ամենասովորական,

իմաստից բաժանում բառը մաթեմատիկական տերմինի իմաստ ևս ունի, մի բան, որ պատճառ է հանդիսացել այս բառաբույնի երկու այլ անդամների, ինչպես գոյականական իմաստով գործածվելու, այնպես էլ տերմինի արժեք ստանալու։ Սրանց մասին, սակայն, կխոսվի ստորև։ Այս բառը կարող է օգտագործվել նաև գործողության կատարման արդյունք նշանակությամբ. այս դեպքում այն ցույց է տալիս հիմք-բայի արտահայտած գործողության հետևանք։ Մի քանի տասնամյակ առաջ բաժանումը իր մեջ ուներ նաև բաժանմունք բառի իմաստը՝ «Եվրոպայի շատ կետերում ունի յուր բաժանումները» (Մուր., 2, 358), ինչպես նաև բաժանմունքը մի այնպիսի մասնավոր իմաստով, ինչպիսին է նուրկաբաժին իմաստը՝ «Առաջին բաժանման մեջ, որ նայում էր մեծ փողոցի վրա» (Մուր., 1,87)։ Բացի այս, բաժանում բառը օժտված է հետևյալ իմաստով՝ անջատում (սրտաշարժ բաժանում, բաժանման րոպե), «Ես անիծում էի մեր բաժանումը» (Շ, ՔՀ, 147) և այլն։ Եվ եթե ում→մունք հոմանիշությունը այնքան էլ բնորոշ չէ մեր լեզվին, թեկուզ նրա XIX դարի վիճակին, ապա այդ ժամանակաշրջանի համար բավական բնորոշ է մունք→ում հոմանիշությունը, այսպես. «...Կրոնական բաժանմունքները որքան թշվառություններ են բերել ազգի գլխին» (Մուր., 5, 753), «Ահա այդ տեղից են սկիզբ առել հայերի մեջ բաժանմունքները» (Ր., 1, 368, 55), «Բայց ժամանակը կարող է ունենալ բազմաթիվ բաժանմունքներ» (Հր. Աճ., ԼՔ 4, 33) և այլն։

Այժմ այս ածանցյալի խնդրառության մասին։ Ինչպես հայտնի է, հիմք-բայը իբրև ներգործական սեռի բայ եռարժույթ է՝ ով, ում և ինչ։ Արդ, բայ→բայանուն (բաժանել→բաժանում) փոխակերպման ժամանակ ում հարցին պատասխանող անդամը մնում է անփոփոխ, ինչ հարցին պատասխանող անդամը ուղիղ ձևից փոխակերպվում է սեռականի՝ $Գ_{ում} → Գ_{սեռ}$։ Իսկ ով հարցին պատասխանող անդամը անհրաժեշտության դեպքում կարող է հանդես գալ կողմից ետադրության հետ։ Ինչպես տեսնում ենք, այս ածանցյալը հիմնականում պահպանում է հիմք-բայի խնդրառական պատկերը, մանավանդ, եթե ի նկատի ունենք գործողության կատարման համար անհրաժեշտ օբյեկտները։

բ) բաժան–ություն

Սովորաբար –ություն–ով կազապարների իմաստային սահմանները բավականին որոշակի են, մի բան, որ կարելի է բացատրել այդ ածանցի՝ իրենից առաջ ընկած մասի ընդհանուր իմաստը անվանելու ունակությամբ։ Այս ընդհանուր օրինաչափությունից ելնելով, թվում է, թե այս դեպքում ևս բաժանություն բառի մեջ պետք է գերակշռեր բաժան ածականի իմաստը անվանելը։ Բայց իրականում այդպես չէ, քանի

որ բաժանություն հիմնական իմաստը կապվում է ոչ թե բաժան ածականի, այլ բաժանել բայի հետ և այդ գործողությունը անվանելու նշանակություն ունի։ Բաժան→բաժանություն սերումը խիստ սահմանափակ կիրառություն ունի (բաժան, բաժանված լինելը)։ Բացի վերը նշված իմաստներից, այս բառը ունի նաև «գործողության կատարման արդյունքի» իմաստ, որը սերտորեն առնչվում է բաժան→բաժանություն կաղապարի ընդհանուր իմաստի հետ։

Բաֆֆու մոտ հանդիպում են այս բառը բաժանումի փոխարեն գործածելու դեպքեր՝ «Աշխատանքի բաժանություն չկար» (Բ., 9, 458), «Աշխատանքի բաժանության սկզբունքի վրա հիմնվելով...» (Բ., 10,394—95)։

Բաժանություն բառը, չնայած իր հոմանիշությանը բաժանում-ին, ինչպես վերը տեսանք, պահպանում է հիմք-բայի խնդրառական ունակությունները։

գ) բաժան-f

Սա բաժանում-բաժանություն- բաժանք հոմանիշ շարքի անդամներից մեկն է և խիստ որոշակի իմաստ ունի։ Եթե այս շարքի նախորդ երկու անդամները իրենց հիմնական իմաստի (գործողության անվանում) կողքին այլ իմաստներ ևս ունեն, ապա բաժանf բառը որոշակիորեն «մասնագիտացել» է գործողության անվանում նշանակության համար։ Ըստ որում, եթե այդ հոմանիշ շարքի առաջին բառը՝ բաժանում ավելի շատ անվանում է բաժանել-ի բաշխել իմաստը, որ ինքնըստինքյան անցողական է, ապա մյուս երկու անդամները՝ բաժանություն և բաժանf անվանում են բաժանել-ի զատել, անջատել, տարբերել իմաստները, որոնց մեջ նախորդի համեմատությամբ անցողականությունը ավելի թույլ է արտահայտվում։ Որոշ չափով այս հանգամանքով պետք է բացատրել հիմք-բայի խնդրառական ունակությունների պահպանումը առաջինում և չպահպանումը մյուս երկուսում։

դ) բաժան-որդ

Ժամանակակից գրական հայերենում այս բառը տերմինի աստիճանի որոշակիություն է ձեռք բերել և ինչ-որ տեղ կորցրել է իր սովորական բաժանող իմաստը, որ շատ հատուկ է -որդ-ով կաղապարին։ Իր սովորական իմաստով այս բառը գործածական էր դրական հայերենի զարգացման նախորդ փուլերում՝ «Կինը լինում է նրա անբախտության անարատուչ բաժանորդը» (Բ., 9, 381), «Թող ես նույնպես բաժանորդ լինեմ ձեր ուրախությանը» (Բ., 1, 351), «Վշտերին բաժանորդ» (Մուր., 2, 50)։ Մեր օրերում այս բառի գործածությունը ավելի շատ ոճական ծանրաբեռնվածություն ունի՝ «Կարծես պատրաստ էր...,

որպեսզի Աստղիկը լիներ իր մտքի ու խղճի բաժանորդը (Վ. Խեչ., ՄՄՀ, 29)։

Այս բառը իր բաժանող իմաստով պահպանում է հիմք-բայի խընդրառությունը հետևյալ կերպ՝ բաժանեց վիշտը, վշտի բաժանորդ, սերը բաժանեց, սիրույն բաժանորդ (Ր., 7, 89) և այլն, այսինքն պահպանում է բայանվանը հատուկ խնդրառական պատկերը, երբ ուղիղ խընդրի ուղիղ ձևը փոխարկվում է սեռական հոլովի, պահպանելով, սակայն, իր օբյեկտային նշանակությունը։

ե) բաժան(մ)-ունք

Գրական հայերենում այս բառը ամենալայն առումով ինչ-որ մի բանի ստորաբաժանում, հատված նշանակությունն ունի։ Դժվար չէ նկատել, որ այս բառը տվյալ իմաստով կապվում է բաժանել-ի անջատել, զատել մասնավոր իմաստների հետ, ուստի խնդրառական ունակության պահպանում հնարավոր չէ։

Այս բառաբույնի հաջորդ անդամն է բաժանել-իք բառը, որը իմաստային բավականին որոշակի սահմաններ ունի և ցույց է տալիս ինչ-որ մի բան, որ ենթակա է «բաժանում» գործողությանը։ Ընդհանրապես պետք է ասել, որ -իք-ով կազմված ածանցյալների մոտ այս իմաստը խիստ գերակշռող է։ Իսկ ընդհանրապես այս ածանցյալները տեքստի մեջ մեծ մասամբ հանդես են գալիս որևէ հոդի ուղեկցությամբ, մի բան, որն ավելի է ընդգծում այս ածանցյալի գոյականական գործածությունը։ Վերևում արդեն ասվել է, որ այս բառաբույնի մյուս երկու անդամները՝ բաժանարար և բաժանելի տերմինի աստիճանի են բարձրացել։ Այս հանգամանքը մեծապես նպաստում է այդ բառերի, որ իրենց ամենաընդհանուր իմաստով ածականներ են, իբրև գոյական գործածելուն։

Այդ ածանցյալները քանորդ բառի հետ տերմինային մանրահամակարգ են կազմում։

2. Աճեց -բառաբույնը հնգանդամ է։

ա) աճ-ում

Ինչպես -ում-ով ձևերը ընդհանրապես, այնպես էլ այս կոնկրետ դեպքում աճում ձևը տվյալ գործողությունն է անվանում։ Պետք է ասել, որ այս բառաբույնի բոլոր անդամներն էլ մեծ ճկունություն են հանդես բերում խոսքում միմյանց փոխարինելու առումով, այլ կերպ ասած՝ բավական որոշակի հոմանիշ շարք են կազմում։ Իսկ ընդհանուր առմամբ աճում ձևը սահմանափակ կիրառություն ունի, քանի որ, եթե XIX-դարում և XX-ի առաջին երկու տասնամյակում այս ձևի փոխարեն (գործողությունը անվանելու համար) ավելի շատ գործածվում էր աճե-

լություն ձևը, ապա ներկայումս բավական տարածված է աճում-ի փոխարեն գործածել այդ բառաբույնի մի այլ անդամ՝ աճ: Աճելություն ձևի գործածության հանդիպում ենք Բաֆֆու, Թումանյանի, Լեոյի և այլ հեղինակների մոտ։

Աճ ձևի լայն կիրառությանը, անկասկած, մեծապես նպաստել են վերջին երկու տասնամյակում մեծ ծավալ ստացած դեմոգրաֆիական, սոցիոլոգիական և այլ տիպի հետազոտությունները, ուր աճ բառը տերմինի արժեք է ձեռք բերել։ Եվ, եթե այս առումով աճ բառը իբրև տրվյալ գործողության հետևանք հանդես եկող երևույթի անվանումն է, ապա աճում ձևը ավելի շատ աճելու գործողության ընթացքը ցույց տալու համար է կիրառվում։

Հիմք-բայի և նրանից ածանցյալների փոխհարաբերությունը քննելիս տեսնում ենք, որ այն դուրս չի գալիս բայ→բայանուն սերման համար անհրաժեշտ փոխակերպման սահմաններից։

3. Խեղդեց—բառաբույնը վեցանդամ է։

ա) Խեղդում—բավական սահմանափակ կիրառություն ունի և գլխավորապես գործողությունը անվանելու համար է գործածվում։ Այս խմբի բառերը, պետք է ասել, որոշակի են իրենց իմաստով և հոմանիշություն հանդես չեն բերում, բացի, թերևս, խեղդոց բառից, որ մի կողմից կարող է նշանակել խռնվածություն, մարդկանց կուտակում մի փոքր տեղում, իսկ մյուս կողմից՝ ինչպես և -ոց-ով կազմված ձևերի մեծ մասով, այնպես էլ այս ձևով կարելի է գործողությունը անվանել։ Եթե մյուս դեպքերում -իչ-ով ձևի իմաստի մեջ գերակշռում է գործողի անվանում իմաստը, ածականական իմաստին զուգահեռ և հաճախ էլ նրանից առավել, ապա խեղդել ձևում գործողի անվանում կիրառությունը շատ սահմանափակ է, իսկ ածականական իմաստը՝ բավականին տարածված։

Խեղդվում-ը խեղդել գործողության արդյունքն է ցույց տալիս, իբրև խեղդման, խեղդոցի հետևանք։

Խեղդել բայը երկարժույթ է՝ ո՞վ և ո՞ւմ (ինչը): Ածանցյալներից և ոչ մեկը ամբողջությամբ չի պահպանում հիմք-բայի. խնդրառական պատկերը։ Ավելին. նրանք այս կամ այն կերպ առնչվում են միայն ո՞վ հարցին պատասխանող անդամին, իհարկե, բայ→բայանուն սերման համար պարտադիր փոխակերպումներով հանդերձ։

Այսպիսով, բառերի միշև շարահյուսական կապը բավականին բարդ ու հետաքրքրական մի երևույթ է և, անկասկած, այդ հարցին անդրադառնալիս պետք է ուշադրության կենտրոնում պահել կապվող բառերի սերման առանձնահատկությունները։

Համառոտագրություններ

Հր. Աճ., ԼՔ.— Հրաչյա Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի հ. 4, Երևան, 1959։

Մուր.— Մուրացան, Երկերի, ժողովածու, հ. 1, 2, 5, Երևան, 1951—54։

Ր.— Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 1, 7, 9, 10, Երևան, 1955—59։

Վ. Խեչ., ՄՄՀ.—Մեզ մոտ հարավում, Երևան, 1955։

Շ. ՔՀ—Հովհաննես Շիրազ, Քնար Հայաստանի, Երևան, 1958։